



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՏՀ  
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՁԵՌՆԱՐԿ

(ուսումնամեթոդական ուղեցույց)

ԵՐԵՎԱՆ 2013



WORLD BANK



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ

# որակի ապահովման ձեռնարկ

(ուսումնամեթոդական ուղեցույց)

«ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկը» իրատարակվել է  
Համաշխարհային բանկի «Կրթության որակ և  
համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի  
«Որակի ապահովման ներբուհական համակարգի  
ներդրում և դրա հետագա բարելավում»  
բաղադրիչի շոշանակներում



WORLD BANK

ԵՐԵՎԱՆ 2013

**Հրապարակվում է Հայաստանի պետական լրնդեսագիրական  
համալսարանի գիրական խորհրդի երաշխավորությանը**

**ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ.** ուսումնամեթոդական ուղեցույց

**Հեղինակներ՝ Պարույր Քալանքարյան** (գլխավոր խմբագիր)

**ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր,**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Ներսես Գևորգյան**

**ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետ,**

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման ամբիոնի վարիչ**

**Գայանե Մերժինյան**

**ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ**

**համագործակցության բաժնի պետ**

**Աննա Փախյան**

**որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Գագիկ Աղաջանյան**

**որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Մերի Գալլարյան**

**որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ**

**Գրիգոր Նազարյան**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Կարեն Գրիգորյան**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Առաքենական Հայրապետյան**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Արմեն Բուղալյան**

**լրնդեսագիրության թեկնածու, ղոցենից**

**Հեղինակներ**

Հ 918 ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ/ Պարույր Քալանքարյան, Ներսես  
Գևորգյան, Գայանե Մերժինյան, Աննա Փախյան, Գագիկ Աղաջանյան, Մերի  
Դալլարյան, Գրիգոր Նազարյան, Կարեն Գրիգորյան, Առաքենական Հայրապետյան,  
Արմեն Բուղալյան.- Եր.: ՀՊՏՀ հրատ., 2013.- 104 էջ:

Ուսումնամեթոդական ուղեցույցում ներկայացված են ՀՊՏՀ որակի ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը, ընթացակարգերը և հետադարձ կապի մեջանիցմները:

Ուղեցույցը նախատեսված է ՀՊՏՀ վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև որակի ապահովման համակարգի հետազոտողների համար:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
<b>ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....</b>	
1.1 Որակի ապահովման համակարգի կարգավորիչ փաստաթղթերը.....	9
1.2 Որակի սահմանումը .....	13
1.3 Որակի ապահովման համակարգ .....	15
1.4 Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները.....	15
1.5 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ / ՈԱԵՉՈՒ-ի հիմնական սկզբունքները .....	16
1.6 Որակի ներքին՝ բուհական ապահովման չափորոշիչները և ուղենիշները.....	18
1.7 Որակի արտաքին ապահովում .....	27
<b>ԳԼՈՒԽ 2. ՀՊՏՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.....</b> 34	
2.1 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը .....	34
2.1.1 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ելակետային սկզբունքները, նպատակներն ու խնդիրները .....	34
2.1.2 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդիանուր նկարագրությունն ու կազմակերպական կառուցվածքը .....	36
2.1.3 ՀՊՏՀ որակի ապահովման հիմնական գործընթացները .....	42
2.2 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական սկզբունքները .....	43
2.3 ՀՊՏՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը .....	45
2.4 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը .....	46

<b>ԳԼՈՒԽ 3.ՀՊՏՀ ՈՐՍԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ</b>	49
3.1 Ուսումնառության գնահատում .....	49
3.1.1 Գնահատման համակարգի սկզբունքները.....	53
3.1.2 Գնահատման բազմագործոն համակարգ .....	55
3.1.3 Ուսումնառության արդյունքների գնահատման լնթացակարգ .....	55
3.1.4 Դասավանդման սկզբունքներ և լնթացակարգեր .....	59
3.2 Պրոֆեսորադասախոսական համակազմի հավաքագրում, ընտրություն և մասնագիտական զարգացում.....	60
3.2.1 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման քաղաքականություն .....	60
3.2.2 Գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման լնթացակարգ.....	65
3.2.3 ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական զարգացման քաղաքականություն .....	75
<b>ԳԼՈՒԽ 4 ՀՊՏՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁԿԱՓԻ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ</b>	78
4.1 ՀՊՏՀ հետադարձ կապի քաղաքականություն .....	78
4.2 Հետադարձ կապի մեխանիզմներ .....	80
4.3 Հետադարձ կապի ստացումը և օգտագործումը .....	84
4.4 Հասարակական պատասխանատվություն. Հրապարակայնություն և հաշվետվողականություն. որակի ապահովման համակարգի հետ հետադարձ կապը .....	85
<b>ԶԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	94
<b>ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ</b> .....	97

## ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհում լնթացող կրթական բարեփոխումները և զարգացումները պայմանավորված են կրթության նոր քաղաքականության մշակմամբ և անցումնվ դեպի դրանց իրագործումը: Եվ այս պատասխանատվությունը կրում են համալսարանները: Համալսարանների գործունեությունից է կախված կրթական բարեփոխումների իրականացումը և ընդհանուր առմամբ հասարակական զարգացումը: Ինչպես նշված է Համալսարանների ազատությունների Խարտիայում «...մարդկության ապագան մեծապես կախված է մշակութային, գիտական և տեխնիկական զարգացումից, որը ստեղծվում է մշակույթի, գիտելիքի և հետազոտությունների իրական կենտրոններում՝ համալսարաններում»:

Համալսարանները վերակառուցվում են ըստ նոր մարտահրավերների: Դառնում են ազատ ու ստեղծագործ մտքի բաց հարթակներ՝ հասարակությանը մատուցելով կրթական, գիտական և այլ ծառայություններ:

Համալսարանները աստիճանաբար պետք է դառնան ոչ միայն բաց համակարգեր այլ նաև կամրջեն կրթությունը և աշխատաշուկան: Այս գործընթացներում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ ուսանողները, գործատուները, շրջանավարտները, ծնողները, պետական և հասարակական կազմակերպությունները, այլ խոսքով ամբողջ հասարակությունը: Նշվածը խիստ տրամաբանական է, քանզի կրթությունը հանրային բարիք է: Ժամանակակից աշխարհում համալսարանների առաքելությունը ոչ միայն կրթություն տրամադրելն է այլ հասարակական ակտիվ քաղաքացուն, ազատ, ստեղծագործ մարդուն անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների և պատասխանատվության փոխանցումն ու զարգացումն է:

Կրթական համակարգերի կառավարման փոփոխություններն ու ազատ շուկայական հարաբերությունները զարգացման սկզբունքորեն նոր հնարավարություններ են ընձեռել բուհերին՝ միաժամանակ ներկայացնելով նոր մարտահրավերներ: Մասնավորապես, կրթական ծառայությունների մատուցման շուկայում մրցակցության աճը անհրաժեշտաբար հանգեցրել է բուհերի գործունեության շարունակական կառուցվածքային բարեփոխումների:

Սրբնակարգ փոփոխություններ են տեղի ունենում կրթության միջազգային ոլորտում՝ ազդելով Հայաստանի կրթական համակարգի, կրթության

կառավարման, կրթության որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վրա:

Կրթության զարգացումների նոր փուլը պայմանավորված է կրթության պարադիգմի փոփոխությամբ՝ դասախոսակենտրոն համակարգից դեպի ուսանողակենտրոն համակարգ անցնելու գործընթացով:

Համալսարանների նորացված քաղաքականության և ընթացակարգերի մշակման, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման մեխանիզմների հստակեցման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ արտաքին միջավայրի վերափոխման արդյունքում փոխվել են շահակիցների կողմիցրարձրագույն կրթությանը ներկայացվող պահանջները: Արտաքին միջավայրի ազդեցությունները հիմնականում իրականացվում են աշխատաշուկայի կողմից:

Շահակիցների համար կրթության բովանդակության մշտական հարստացման և կատարելագործման պահանջների հետևանքով առավել մեծ նշանակություն են ձեռք բերում ուսումնական հաստատության դրական կերպարը, շնորհվող որակավորման հեղինակությունը, մատուցվող ծառայությունների որակը, հարատև կրթության հնարավորությունը և այլն:

Հայաստանի պետական տնտեսազիտական համալսարանը իրականացնում է համապարփակ կրթական բարեփոխումներ՝ միտված կրթության որակի, գործունեության և գնահատման արդյունավետության բարձրացմանը:

ՀՊՏՀ կայուն զարգացումն ապահովելու նախապայմաններից է ուազմավարական ծրագրերի մշակումը: Մասնավորապես, վերաձևակերպվել են ՀՊՏՀ տեսլականը և առաքելությունը: ՀՊՏՀ առաքելության վերաձևակերպման համար հաշվի են առնվել ներքին և արտաքին միջավայրի գործուների ազդեցությունները, մասնավորապես կրթության միջազգային զարգացումները՝ այդ թվում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունները: ՀՊՏՀ-ն վերաբերում է նաև իր հասարակական պատասխանատվությունը և համագործակցության ընդլայնումը շահակիցների հետ:

ՀՊՏՀ նոր ուազմավարության փիլիսոփայության հիմնադրույթներն են:

- Կրթության որակի մշակույթի ստեղծումը և զարգացումը,
- Ուսումնական գործընթացի, վարչական, ֆինանսական և այլ ծառայությունների կառավարման արդյունավետության բարձրացումը,
- Ծրջանավարտների ծառայողունակության բարձրացումը,
- Ուսանողակենտրոնի համակարգիներումը,

- Ուսումնառությանմատչելիությունը,
- Շահակիցների հետհամագործակցության ընդլայնումը,
- Մրցունակությունը և միջազգայնացումը,
- Գիտահետազոտական աշխատանքների հիմնարարությունը,
- Կիրառական հետազոտությունների և նորարարության իրականացումը և առևտրայնացումը,
- Հասարակական պատասխանատվության բարձրացումը,
- Հասարակական ակտիվ քաղաքացու, ազատ, ստեղծագործարդունակության անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների և պատասխանատվության փոխանցումն ու զարգացումը,

## **ՀՊՏՀ տեսլականն է.**

Մինչև 2018 թվականը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը կդառնա Հայաստանի ամենամրցունակ, կիրառական գիտելիք և կարողություններ տրամադրող և հետազոտություններ իրականացնող տնտեսագիտական ուղղածությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունը:

## **ՀՊՏՀ առաքելությունն է.**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, հիմնվելով ակադեմիական ազատությունների և ինքնավարության, ուսանողակենտրոն ուսումնառության, կրթություն-աշխատաշուկան համագործակցության, կիրառական գիտելիքի փոխանցման գիտահետազոտական աշխատանքների վրա՝ մասնագիտական ներուժի կենտրոնացման, ուսուցանանական և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման և առաջընթաց հետազոտական աշխատանքների իրականացման միջոցով պատրաստում է մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով գինված և ժողովրդավարական քաղաքացիության առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում:

ՀՊՏՀ տեսլականի և առաքելության իրականացման մեխանիզմը գերազանցության կենտրոնների ստեղծմամբ փոփոխությունների աստիճանական ներդրումն է:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կրթական

քաղաքականությունը կոչված է աջակցելու համալսարանին իր առաքելությունն ու ուսումնական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու և կրթության որակն ապահովելու համար:

Կրթության ոլորտի զարգացումները, շահակիցների ներգրավվածության աճը և նրանց պահանջների փոփոխությունները բուհի առջև խնդիր են դնում հիմնարար քաղաքականության և ընթացակարգերի մշակման, որոնց իրագործումը կարող է էականորեն բարձրացնել տրամադրվող կրթական ծառայությունների որակը և արդյունքում ամրապնդել բուհի մրցակցային դիրքը: Ընդհանրապես բուհի մրցունակության բարձրացման կարևորագույն արդյուրը դրա կառավարման արդյունավետության բարձրացումն է: Կառավարչական որոշումները պետք է ընդունվեն հավաստի և օբյեկտիվ տեղեկատվության հիման վրա, իսկ կառավարչական ներազդեցության ձևերը լինեն նպատակային և արդիական:

Կարևորագույն ուղղություն է ՀՊՏՀ կառավարման արդյունավետության բարձրացումը: Այս առումով, բուհի կառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն և անհրաժեշտ ուղղություններից մեկը հետադարձ կապի արդյունավետ կառուցակարգերի մշակումն է և դրանց իրագործման միջոցների հստակեցումը: Հետադարձ կապը ամփոփում է բոլոր շահակիցների և ներգրավված կողմերի հետ փոխազդեցության մեխանիզմը, ներառելով բուհի աշխատակիցները, ուսանողները, պետական կառավարման մարմինները, աշխատաշուկան և ընդհանուր առնամբ հասարակությունը: Այդպիսի հետադարձ կապի իրականացման կազմակերպումը հանգեցնում է բուհի տարրեր օղակներում կառավարման մարմինների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը և, հետևաբար, ընդունվող կառավարչական որոշումների հիմնավորվածության բարձրացմանը: Հետադարձ կապի իրացմաննորիկվ ստացված տեղեկատվությունը, բնականաբար, օգտագործվում է նաև բուհի քաղաքականության և ընթացակարգերի հետագա հստակեցման, ինչպես նաև ուսումնական և գործառնական պլանավորման արդյունավետ իրագործման նպատակով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը պետք է նպաստեն կրթության գերխնդրի իրագործմանը՝ կրթության որակի բարձրացմանը՝ օժանդակելով բուհի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու վարչարարության նվազեցմանը, մրցունակության զարգացմանը և ուսանողակենտրոն ուսումնառության ներդրմանն ու բարելավմանը:

# **ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

## **1.1 Որակի ապահովման**

### **համակարգի կարգավորիչ փաստաթղթերը**

Հայաստանում կրթության որակի հասկացության և որակի հավաստման նոր համակարգի ստեղծման քննարկումները սկսվել են Եվրախորհրդի “Որակի հավաստման իրավական շրջանակը Հարավային Կովկասի երկրներում. Հայաստան, Վրաստան և Աղբքեջան” ծրագրից սկսած 2000 թվականից: Նշված ծրագրի շրջանակում մշակված ազգային գեկույցներում և 3 երկրների կրթության նախարարների համատեղ հոչակագրերում շեշտվում էր որակի հավաստման նոր համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, բուհերի կառավարման ժողովրդավարացումը (ժողովրդավարական սկզբունքների ներդրումը), ակադեմիական ազատությունները և ուսանողների մասնակցությունը որակի հավաստման գործընթացներին:

Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի գործունեության կարգավորիչ փաստաթղթերը ձևավորվել և մշակվել են Բոլոնիայի գործընթացի տարրեր փուլերում: Ստորև ներկայացվում են հիմնական ձևակերպումները.

- **Բոլոնիայի հոչակագիրը սահմանում է ընդհանուր նպատակ /Բոլոնիա, 1999թ./. «Աջակցություն եվրոպական համագործակցությանը որակի ապահովման ասպարեզում՝ նկատի ունենալով համեմատելի շափանիշների և մերողաբանության զարգացումը»:**
- **Պրահայի հոչակագրում ձևակերպված են որոշակի հանձնարարականներ /2001թ./. «Եվրոպայի կրթության նախարարները ճանաչեցին այն կենսական դերը, որն ունեն որակի ապահովման համակարգերը Եվրոպայում՝ որակի բարձր ստանդարտների հավաստման և որակավորումների համադրելիության դյուրացման գործում: Նրանք խրախուսեցին նաև ավելի սերտ համագործակցությունը փոխանակման և որակի ապահովմանցանցերիմիջն։Նրանք շեշտեցին եվրոպական սերտ**

համագործակցության և փոխադարձ վստահության անհրաժեշտությունը որպեսի ապահովման ազգային համակարգերի փոխընդունման համար: Ավելին, նրանք խրախուսեցին համալսարաններին և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ տարածելու լավագույն փորձի օրինակներ և ստեղծելու սցենարներ գնահատման և հավատարմագրման /հավատագրման/ մեխանիզմների փոխադարձ ընդունման համար: Նախարարները կոչ արեցին համալսարաններին և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններին, ազգային գործակալություններին և Բարձրագույն Կրթության նորակի Հավաստման Եվրոպական Յանցին (ՌՀԵՅ)՝ համատեղ աշխատել երաշխավորությունների ընդհանուր հենքի ստեղծման ուղղությամբ և տարածել լավագույն փորձը՝ համագործակցելով ՌՀԵՅ-ին չանդամագրված երկրների համապատասխան մարմինների հետ»:

- **Բեռլինի հոչակագրում որպեսի ապահովմանը կենտրոնական տեղ է հասկացված /2003թ./.** «Բարձրագույն կրթության որակը իրավամբ դարձել է Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի հիմնադրման գործընթացի սիրտը: Նախարարները պարտավորվում են աջակցել որպեսի ապահովման հետագա զարգացմանը՝ ինստիտուցիոնալ, ազգային և եվրոպական մակարդակներում: Նրանք ընդգծում են որպեսի ապահովման փոխադարձաբար ընդունելի չափանիշների, ընթացակարգերի և մեթոդների մշակման անհրաժեշտությունը: Նրանք նաև շեշտում են, որ համաձայն ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքների՝ բարձրագույն կրթության որպեսի ապահովման հիմնական պատասխանատվությունն ընկնում է բուհի վրա, ինչը հիմք է ստեղծում որպեսի ազգային հենքի շրջանակներում բուհի ակադեմիական համակարգի իրական հաշվետու լինելուն: Այդ նպատակով նրանք պայմանավորվում են, որ մինչ 2005թ. որպեսի ապահովման ազգային համակարգերը պետք է ներառեն.
- ներգրավված մարմինների և հաստատությունների պատասխանատվության (իրավասության) շրջանակը,
- ծրագրերի և հաստատությունների գնահատումը, ներառյալ ներքին գնահատումը, արտաքին ստուգումը, ուսանողների մասնակցությունը և արդյունքների հրապարակումը,

- հավատարմագրման, հավաստագրման համակարգ կամ դրան համարելի (համարժեք) ընթացակարգեր,
- միջազգային մասնակցություն, համագործակցություն և ցանցերի ձևավորում:
- **Բերգենի հոչակագիրն /2005թ./** ամփոփում է նախորդող գործողությունների արդյունքները և նոր ուղենիշներ սահմանում որակի ապահովման և եվրոպական համագործակցության համար. «Գրեթե բոլոր երկրները իհմք են նախապատրաստել Բեռլինի հոչակագրում շարադրված չափանիշների վրա իիմնված որակի ապահովման համակարգերի համար՝ համագործակցության ու ցանցային ընդգրկման բարձր աստիճանով։ Այնուամենայնիվ, դեռևս առաջընթացի անհրաժեշտություն կա, մասնավորապես ուսանողների մասնակցության և միջազգային համագործակցության առնչությամբ։ Բացի դրանից, մենք հորդորում ենք բարձրագույն ուսումնական հաստատություններին շարունակել իրենց ջանքերը համապատասխան գործողությունների որակը բարելավելու ուղղությամբ՝ ներքին մեխանիզմների համակարգված ներդրման և համապատասխանեցման որակի արտաքին հավաստման համակարգերի հետ»։

Նկատի ունենալով որակի ապահովման ներկայացվող պահանջները և չափանիշները և հետագա շարունակական հանդիպումները (Լոնդոնում՝ 2007թ., Լյուվենում՝ 2009թ. և Բուխարեստում՝ 2012թ.)՝ անհրաժեշտություն էր առաջանում իիմնել Որակի ապահովման ազգային համակարգ։ Անհրաժեշտ էր համապատասխանեցնել Հայաստանի կրթության որակի ապահովման համակարգը «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին» (ՈԱԵԶՈՒ)։ Մասնագիտական կրթության որակի ապահովման նոր համակարգի ստեղծմամբ ակնկալվում էին հետևյալ հիմնական արդյունքները.

- մասնագիտական կրթության որակի բարձրացում,
- Հայաստանի մասնագիտական կրթության որակավորումների միջազգային ճանաշման դյուրացում,
- մասնագիտական հաստատությունների հասարակական պատասխանատվության բարձրացում,
- ինտեգրում միջազգային կրթական ցանցերին,

- օտարերկրյա ուսանողների հոսքի ավելացում,
- միջազգային կրթական շուկայում Հայաստանի կրթական որակավորումների որակի վստահության ամրապնդում,
- մասնագիտական կրթության համակարգի ժողովրդավարացման խորացում:

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններում իրականացվող գործընթացների համակարգման, կրթության որակի բարելավմանն ուղղված քայլերի խթանման և որակի արտաքին հավաստման համակարգի ձևավորման ու գործարկման նպատակով 2008 թվականի նոյեմբեր 27-ին ՀՀ Կառավարության N1486 որոշմամբ, ստեղծվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

### **ՈԱԱԿ-ի առաքելություններ:**

- բարերել շահակիցների պահանջները պարտադիր իմստիտուցիոնալ փորձաքննության և կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրման միջոցով,
- համաձայնեցնել որակի ապահովման չափանիշները և չափորոշիչները ընդունված միջազգային չափանիշների և չափորոշիչների հետ,
- երաշխավորել միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր դիրքեր հաստատելուն,
- արժևորել շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:
- ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրները հետևյալն են.
- հավատել ՄՈՒՀ-երի գործունեության և նրանց կողմից շնորհվող որակավորումների համապատասխանությունը մասնագիտական կրթության ընդունված չափորոշիչներին,
- աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ,

- խթանել մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՍՈՒՀ-երի) պատասխանատվությունը որակի ապահովման գործընթացի համար, երաշխավորել ՍՈՒՀ-երի որակի վերաբերյալ քափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հանրային հասանելիությունը,
- կիրառել ազգային և միջազգային լավագույն փորձը ՍՈՒՀ-երի կրթական ծառայությունների գահատման ընթացքում<sup>1</sup>:

## **1.2 Որակի սահմանումը**

ՈԱԱԿ-ը, որպես հայաստանյան մոտեցում որդեգրել է որակի հետևյալ սահմանումը, «Որակը՝ որպես համարթեքություն հայտարարված նպատակին»: Պետք է որոշվի, թե որքանով է կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահմանումը բույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ դնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է զնահատվելու և ներկայացվելու որակը: ՈԱԱԿ-ը առաջին հերթին հատուկ ուշադրություն է դարձնում նպատակների համարթեքությանը հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնահերթություններին:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը մի գործընթաց է, որը նպատակատրության մեջ է որակի պահպանմանը ու բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների մատուցում հասարակությանը, վերլուծություն, պատշաճության մակարդակ, կադրերի հավաքագրում, նշանակման ընթացակարգեր և տարրեր մեխանիզմներ ու համակարգեր:

Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչների և որակի բարելավումը՝ մասնագիտական կրթությունը ուսանողների, գործառուների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար:

Որակի սահմանման տարրեր մոտեցումներն են.

- Որակը որպես գերազանցություն.որակի այս ավանդական հասկացությունը նույնացվում է յուրահատուկ ծառայության կամ արտադրանքի հետ և**

1 <http://www.anqa.am/>

այդ ծառայության կամ արտադրանքի համար կարգավիճակ է շնորհվում թե՝ ծառայություն տրամադրողին, թե՝ այդ ծառայությունից օգտվողին: Այս պարագայում, որակի չափումը գերազանցությունն է:

- **Որակը որպես կատարելություն** (զրո դեֆիցիտ). որակի այս հասկացությունը դիտարկվում է որպես համապատասխանություն որևէ չափորոշիչի կամ պահանջի հետ: Այս մոտեցման արմատները արդյունաբերության որակի վերահսկման գաղափարից են բխում: Այն չափման հիմք է, չեզոք գաղափար, որը կիրառվում է արտադրանքի կամ ծառայության պահանջված հատկանիշները նկարագրելու համար:
- **Որակը որպես համապատասխանություն նպատակին.** որակի այս սահմանումն ընդունված է վերլուծաբանների և բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողների մեծամասնության կողմից: Այս մոտեցումն առաջարկում է, որ որակը ոչ մի իմաստ չունի, եթե այն միտքած չէ ծառայությունների կամ արտադրանքի նախանշված նպատակներին հասնելուն: Այս պարագայում, որակը գնահատվում է՝ հիմք ընդունելով, թե որքանով է տվյալ ծառայությունը կամ արտադրանքը համապատասխանում նախանշված նպատակներին:
- **Որակը որպես վճարված գումարին համապատասխան ծառայություն.** որակի այս սահմանումը դիտվում է հաստատության նպատակներին հասնելու արդյունավետության տեսանկյունից: Այս սահմանումը. «որակը որպես համապատասխանություն նպատակին» սահմանման տարրերակներից է, և այն շեշտադրում է ներդրումների արդյունավետ օգտագործումը:
- **Որակը որպես փոխակերպում.** որակի այս սահմանումը բխում է «որակական փոխակերպում» հասկացությունից և ենթադրում է արմատական փոփոխություն: Փոխակերպումը չի սահմանափակվում ակնհայտ կամ ֆիզիկական փոփոխություններով, ավելին, այն ներառում է ճանաչողական/իմացական փոխակերպումներ: Կրթության տեսանկյունից փոխակերպումը վերաբերում է ուսանողների կարողությունների ընդլայնմանը և հզորացմանը կամ նոր գիտելիքի զարգացմանը:

## **1.3 Որակի ապահովման համակարգ**

Որակի ապահովման համակարգի ձևավորումը, սովորաբար, սկսվում է տարրեր շահակիցների ակնկալիքների վերհանումից, որոնք հետագայում կիրառվում են հաստատության գործունեությունը գնահատելիս: Այդ գնահատումը լինում է երկու տեսակ՝ ինքնավերլուծություն և արտաքին գնահատում: Գնահատմանը, սովորաբար, հաջորդում է բարելավմանը միտված նոր գործողությունների պլանավորումը, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատումը: Որակի ապահովման համակարգը կամ շրջանակը՝

- սահմանում է, թե ինչպես են կառավարվում որակի ապահովմանն ուղղված միջոցառումները,
- բացատրում է, թե ինչ եղանակով են հավաքագրվում փաստերը և տվյալները,
- ներկայացնում է, թե ինչպես է գնահատվում ծառայությունների որակը:

Վերոնշյալը իրականացվում է կարիքների վերհանման և որակի բարելավման ենթակա ոլորտները սահմանելու նպատակով:

## **1.4 Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները**

Բարձրագույն կրթության որակի հավաստման ներքին և արտաքին համակարգերի սկզբունքները և ընթացակարգերը մշակվել են Եվրոպայի Բարձրագույն Կրթության Տարածքում /ԵԲԿՏ/ գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և որակի ապահովման գործակալությունների կիրառման համար՝ ընդգրկելով որակին և չափորոշիչներին վերաբերող հիմնական դրույթները:

Այս չափորոշիչների և ուղեցույցների նպատակն է աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին որակի համակարգերի գարգացման գործում և գործակալություններին՝ իրականացնելու որակի արտաքին գնահատում, ինչպես նաև ձևավորել չափանիշների ընդհանուր շրջանակ, որը

կարող է կիրառվել և՝ հաստատությունների, և՝ գործակալությունների կողմից: Սա չի նշանակում, որ այս չափորոշիչները և ուղեցույցները գործողություններ են թելադրելու և մնալու են անփոփոխ:

ԵԲԿՏ-ի որոշ երկրներում կրթության նախարարությունը կամ դրան համարժեք կազմակերպությունը պատասխանատու է չափորոշիչներում և ուղեցույցներում ընդգրկված որոշ բաժինների համար: Այն երկրում, որտեղ այսպես է, նախարարությունը կամ կազմակերպությունը պետք է ապահովի որակի հավաստման պատշաճ մեխանիզմներ:

## **1.5 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ /ՌԱԵՉՈՒ-ի հիմնական սկզբունքները**

Որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները հիմնված են ԵԲԿՏ քարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մի շարք հիմնական սկզբունքների վրա: Դրանք են՝

- քարձրագույն կրթություն տրամադրողները պատասխանատու են իրենց մատուցած նյութի որակի և դրա ապահովման համար,
- քարձրագույն կրթության որակի և չափորոշիչների նկատմամբ հասարակության հետաքրքրության պաշտպանությունը,
- ԵԲԿՏ-ում ուսանողների և քարձրագույն կրթության այլ շահակիցների համար ուսումնական ծրագրերի որակի քարձրացումը,
- արդյունավետ կազմակերպական կառուցվածքների ներդրումը, որոնց շրջանակներում հնարավոր կլինի մատուցել և աջակցել ուսումնական ծրագրերին,
- որակի ապահովման գործընթացում արտաքին փորձագիտության կիրառման և թափանցիկության կարևորությունը,
- քարձրագույն կրթական հաստատություններում որակի միջավայրի խրախուսումը,
- այնպիսի գործընթացների զարգացումը, որոնց միջոցով քարձրագույն կրթական հաստատությունները կապահովեն հաշ-

վետվողականությունը, այդ թվում պետական և մասնավոր ներդրումների համար,

- հաստատությունները պետք է ցուցադրեն որակ, ինչպես երկրի ներառում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- պետք է կիրառվեն բազմազանությանը և նորարարությանը չխոչընդոտող գործընթացներ:

### **Չափորոշիչների և ուղենիշների նպատակներն են՝**

- ԵԲԿՏ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին մատչելի կրթության ապահովման բարելավումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի կառավարման և բարձրացման հարցում դրանց աջակցելը, հետևաբար ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատման գործում օգնելը,
- որակի ապահովման գործակալությունների աշխատանքի համար հիմքերի ստեղծելը,
- որակի արտաքին ապահովումն ավելի թափանցիկ և շահակիցների/ընդգրկվածների համար ավելի դյուրին դարձնելը:

### **Չափորոշիչների և ուղենիշների խնդիրներն են՝**

- խրախուսել մտավոր և կրթական նվաճումները խթանող բարձրագույն կրթական հաստատությունների գարգացումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ համապատասխան գործակալությունների որակի ապահովման սեփական միջավայրի զարգացման համար աջակցման և ուղղորդման ռեսուրսների տրամադրումը,
- բարձրագույն կրթական գործընթացների և արդյունքների համապատասխան հաստատությունների, ուսանողների, գործատուների և այլ մասնակիցների սպասումների խրախուսումը,
- ԵԲԿՏ-ում որակի ապահովման և բարձրագույն կրթության մատուցման համար ընդհանուր շրջանակի ներդրումը:

**Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները՝ (ՈԱԵՉՈՒ) բաղկացած են երեք մասից.**

Մաս 1. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար:

Մաս 2. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համար:

Մաս 3. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար:

Որակի հավաստման հիմնական ուղեցույցը «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ» փաստաթուղթն է, որով առաջնորդվում են Բոլոնիայի գործընթացի անդամ երկրները: Վերջին տարիներին, գնահատելով կուտակված փորձը՝ ENQA, ESU, EUA և EURASHE կազմակերպություններն առաջարկել են լրամշակել հիմնական փաստաթուղթը: Առաջարկները քննարկման փուլում են, որոնց հիմնական առանցքն է՝ բարձրացնել «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշների» փաստաթորթի հստակությունը, կիրառելիությունը և օգտակարությունը:

**Նշենք առաջարկներից մի քանիսը.**

1. «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշները» սահմանում է որակի հավաստման սկզբունքները, այլ ոչ մանրամասն քարտեզագրում նպատակին հասնելու ուղիները և գործիքակազմը:
2. «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշները» և որակի ապահովման այլ գործիքակազմ ներառել Բոլոնիայի համատեքստում, միահյուսելով Բոլոնիայի գործողությունների վերջնարդյունքներին:

## **1.6 Որակի ներքին՝ բուհական ապահովման չափորոշիչները և ուղենիշները**

Հիմնական սկզբունքը, որ բնորոշում է նոր ձևավորվող համակարգը, անցումն է կրթական գործընթացի «մուտքերի» վերահսկումից «ելքերի» մշտադիտարկմանը և վերահսկմանը: Գերիշխող է դառնում կրթության

պլանավորման այնպիսի մեթոդաբնություն, որի դեպքում կրթական վերջնարդյունքները հանդիսանում են բարձրագույն կրթության կարևորագույն կառուցվածքային տարրերից մեկը: Հետևաբար բուհերի կրթական գործունեության արդյունավետության գնահատման մեջ գիշավորը ոչ քեզ ուսումնական գործընթացի պլանավորումը և իրականացումն է (ուսումնական պլանների բովանդակությունը, ուսուցման ժամերը և այլն), այլ ուսումնառության վերջնարդյունքները՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքը, կարողությունները և հմտությունները, այդքանում՝ ինքնուրույն ուսուցման և ինքնակրթության միջոցով ձեռք բերվածը: Որակի գնահատման գործընթացի ծանրության կենտրոնը ավելի ու ավելի է տեղափոխվում ուսումնական գործընթացի վերլուծությունից (կրթական ծրագրեր, ուսանողների ակադեմիական առաջադիմություն և այլն) դեպի ծրագրերի ելքում ձևավորված կարողությունների գնահատումը: Գնահատման համակարգը ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի մասնագիտական և անհատական պատրաստվածության ստուգումը, և, առաջին հերթին, դեպի շրջանավարտների աշխատանքի տեղափորման հնարավորությունները և ծառայունակությունը, որը և պետք է լինի կրթության արդյունքի գնահատման հիմնական չափանիշը: Այդ պայմաններում որակի ապահովման մեխանիզմները դառնում են կրթական համակարգի «ըստ արդյունքների» կառավարման կենտրոնական բաղկացուցիչը: Վերջապես, բարձրագույն կրթության որակի շեշտադրումը հետապնդում է նաև դիպլոմների և որակավորումների համեմատելիության և ճանաչման ձեռքբերման, եվրոպական կրթության առավելությունների ճանաչման, վստահելիության ու մրցունակության բարձրացման նպատակներ:

**Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշներն են՝**

Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ. հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Դրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Հաստատությունները պետք է նաև կարևորեն ուսանողների և այլ շահակիցների դերը:

2. Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում. հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:
3. Ուսանողների ուսումնառության գնահատում. ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:
4. Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում. հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց անձնակազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի վերջնական գեկույցում:
- 5.Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին. հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:
- 6.Տեղեկատվականհամակարգեր.հաստատությունները պետք է հավաստեն, որ նրանք իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվություն:
7. Հրապարակայնություն. հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաշառ տեղեկատվություն:

ՈԱԱԿ-ը առանձնացրել է որակը գնահատելու և ճանաչելու յոթ տիրույթ: Նրանք են.

- 1. Ինստիտուցիոնալ կարողություն.** ինստիտուցիոնալ կարողությունը նկարագրում է ուսանողներին կայուն ու բարձրորակ ծառայություններ մատուցելու բաղադրիչները:
- 2. Կրթական ծրագրեր.** կրթական ծրագրերի ճկունությունը, համապատասխանությունը արդի շուկայական պահանջներին բարենպաստ

նախապայմաններ է ստեղծում հարափոփոխ միջավայրում գործելու, ունակ մասնագետներ պատրաստելու համար: Դրանով իսկ կրթական ծրագրերի նախագծման, մշտադիտարկման, հաստատման և գնահատման գործում ձեռնարկված հստակ քայլերը կարևոր նշանակություն ունեն կրթական որակյալ պայմաններ ձևավորելու համար:

- 3. Գիտելիքի կառավարում.** Գիտելիքի կառավարումն ուղղված է գիտելիք ձևավորելու գործընթացի արդյունավետության ու հուսալիությանը, ինչպես նաև զարգացմանը և կիրառելիության ապահովմանը: Այն ընդգրկում է նաև հաստատության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և ուսումնական ծրագրերի հետ դրանց կապակցումը:
- 4. Ուսանողակենտրոն մոտեցում.** Կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ: Այսպիսի ուղղվածության արդյունքներն առավել արդյունավետ են լինում, եթե ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են լինում ավելի մեծ ինքնուրույնությամբ ու ճկունությամբ: Արդյունքում, ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորելու ողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. նրա գլխավորնապատակներանումուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառույթի իրականացումը:
- 5.Տեղեկատվության կառավարում.** տեղեկատվության ճշշտ կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներքուիական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծության ու տարածմանը: Հարկ է նշել, որ գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի բափանցիկության և հրապարակայնության ապահովումը:
- 6. Ֆինանսավորում.** ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանա-

կություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների ու հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:

**7. Որակի մշակույթ.** որակը էապես կախված է կրթական հաստատություններում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործումնեություն, քափանցիկություն և շարունակական բարելավում: Ուստի Որակի կենտրոնը կարևորում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմներ ապահովող որակի մշակույթի դերը, ինչպես նաև ուսումնառության որակը:

Այս յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար Որակի կենտրոնը սահմանել է որոշակի չափանիշներ և չափորոշիչներ: Սահմանված չափանիշները կրթական հաստատությունների կողմից պետք է ընկալվեն որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ:

Յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար դրանք ձևակերպված են որպես բազմաձևության և նորարարության որոշակի ազատություն ապահովող տարածական սահմանումներ՝ ելնելով տարրեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարրերություններից: Այդ ամենով հանդերձ, չափանիշները սահմանված են բավարար հստակությամբ՝ հավաստիանալու համար, որ ընդունելի որակի կարևոր ասպեկտները առկա են ձևակերպումներում: Հավատարմագրված կարգավիճակ ձեռք բերելու համար հաստատությունները պետք է գնահատվեն սահմանված բոլոր չափանիշներով:

ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից մեկն է: Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործումնեության մաս պետք է կազմեն:

Որակի ներքին ապահովման համակարգի հիմնական առաքելությունը բարձրագույնուսումնական հաստությունների գործումնեության շարունակական բարելավումն ապահովելն է: Շարունակական բարելավման գործընթացը կարող է իրականանալ բոլոր հնարավոր ներգրավված կողմերի ստանձնած պարտավորության շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով մասնակիցների կարողությունների հզորացում, որը տեղի է ունենում աշխատակազմի

շարունակական զարգացման միջոցով: Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է 3 հիմնական գործողություն՝ նպատակների և հավատարմագրման չափանիշների սահմանում, գործունեության գնահատում՝ ըստ այդմ չափանիշների, և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորում է որակի կառավարման շարժիչ սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, ստուգում և բարելավում՝ գործընթաց, որի միջոցով ՍՈՒՀ-ն իր և իր շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր արդյունքների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է բուհի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև բուհի անկախությունը և ինքնավարությունը: Բուհի հաշվետվողականությունը և քափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և ընթացակարգերի արտաքին գնահատում:

Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար բուհի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի պարզեցում և ընթացակարգերի քափանցիկություն: Բուհի առաքելությունը և կանոնակարգող համապատասխան բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

### **Որակի ներքին ապահովման համակարգերի կազմակերպման և կառավարման պահանջներն են.**

1. Բուհի որակի ապահովման ընթացակարգերը պետք է կազմվեն հետամուտ լինելով մասնագիտական կրթության որակի բարելավմանը և պահպանմանը: Այդ ընթացակարգերը պետք է համահունչ լինեն ՈԱԱԿ-ի որակի չափանիշներին, քաղաքականությանը և ընթացակարգերին: Իր հերքին, ՈԱԱԿ-ը պետք է տրամադրի որակի ապահովման քաղաքականության շրջանակ, որը կուղղորդի բուհերի որակի ներքին համակարգի ստեղծումն ու գործարկումը:

2. Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի բուհերի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՝ կառավարման ռազմավարական պլանի և թե՝ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է սահմանի որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարրեր գործառույթների և մակարդակների համար: Գործընթացները պետք է առաքելության, արժեքների և տարրեր ծրագրերի, ձերքբերումների վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն տան:
3. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է տարածվի բուհի գործառույթների և գործողությունների այն բոլոր ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպիսիք են, օրինակ, դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցելու ծառայությունները, կառույցները, կացարանները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը, համայնքային ծառայությունները և համագործակցությունը արտադրության հետ:
4. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է կենտրոնանա հայտարարված առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի վրա: Կատարողական ցուցիչների վերանայումն՝ ըստ թիրախների այսպիսի քաղաքականության քաղկացուցիչ մասն է: Ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը պետք է քննարկման հիմնական առարկան լինի: Կրթական ծրագրի հետագա բարելավումը նույնպես պետք է քաղաքականության հիմնական խնդիրը լինի:
5. Որակի ապահովման քաղաքականություն մշակելու և ինստիտուցիոնալ որակը պահպանելու ու բարելավելու պատասխանատվությունը, որպես կանոն, բողնվում է բուհի կառավարման մարմնին: Եթե կառավարման մարմինը որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման ու իրականացման պատասխանատվությունը վերահսկեագրում է որևէ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, ապա դա անհրաժեշտ է հստակ սահմանել: Այդ մարմինը կամ անձը որակին առնչվող խնդիրները պետք է անմիջականորեն գեկուցի կառավարման

- մարմնին, ուստի պետք է պատշաճ տեղ գրադեցնի հաստատության կազմակերպական կառուցվածքում, որպեսզի իրեն վերապահված գործառույթները կատարելու անհրաժեշտ լիազորություններ ունենա:
6. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է ապահովի արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վերանայման գործում:
7. Արտաքին փորձագետների ընտրության և մասնակցության հարցում պետք է ապահովվի նաև էթիկական նորմերի պահպանումը: Փորձագետները պետք է նախապես հայտնեն անձնական, մասնագիտական, ականավոր են հակասել իրենց փորձագիտական պարտավորություններին: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը որոշիչ գործոններ են հաջողության հասնելու համար: Որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար բուհը պետք է հատկացնի անհրաժեշտ ռեսուրսներ:
8. Բուհը պետք է ունենա որակի ապահովման գործընթացների ամբողջական նկարագրություն պարունակող որակի ապահովման ձեռնարկ (սույն Ձեռնարկը): Ձեռնարկը պետք է ներառիկազմակերպական գծապատճերը, որը ցուցադրում է որակի ապահովման պատասխանատվությունների բաշխումը և հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ենթակառույցների: Որակի ապահովման գործընթացները պետք է արտացոլեն տվյալ բուհի առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Որակի չափանիշները պետք է համահունչ լինեն բուհի խնդիրներին՝ ամբողջ կազմակերպության, առանձին ֆակուլտետի և մասնագիտության կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակում: Ընթացակարգերը պետք է ընդգրկեն, սակայն չսահմանափակվեն սույն փաստաթղթում նկարագրված չափանիշներով:
9. Որակի ապահովման ընթացակարգերը պետք է վերստուգելի տվյալների տեսքով տրամադրեն կատարողականի վկայություններ առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն, ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համապելի, ինչպես նաև պարզ և չափելի լինեն: Փաստաթղթերում կատարողական

տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի արդյունավետ պահպանման և բարելավման համար:

10. Ընթացակարգերը պետք է ապահովեն որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը և իրականացման ընթացքը: Այս պահանջը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է:
  11. Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք հեշտ չեն ենթարկվում քանակավես արտահայտելի մշտադիտարկման: Բուհը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:
  12. Որակի ապահովման ընթացակարգերը յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության դեպքում պետք է կենտրոնանան.
- ծրագրի/ծառայության խնդիրների վրա,
  - ծրագրի/ծառայության՝ իր առջև դրված խնդիրներին համապատասխանությունը հաստատող փաստերի վրա,
  - թերությունները վերացնելու և բարելավումներ կատարելու գործընթացների արդյունավետության վրա:

Որակի ներքին ապահովման գործընթացներում կարևոր դերակատարություն ունեն բուհերի որակի ներքին ապահովման ստորաբաժանումները:

Քարձրագույն կրթության որակի ապահովման ասպարեզում հիմնական միտումը հավատարմագրման ազգային համակարգերի միջոցով կրթական գործընթացի և նրա արդյունքների որակի արտաքին վերահսկողությունից անցումն է դեպի որակի կառավարման բուհերի ներքին ինքնազնահատումը (ինքնավերլուծությունը)<sup>2</sup> զուգակցելով այն արտաքին գնահատման համակարգի հետ:

---

2 <http://www.anqa.am/>

## 1.7 Որակի արտաքին ապահովում

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման գործընթացում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը, ընդ որում, ծրագրերի կամ բուհերի արտաքին գնահատման ժամանակ հիմնական շեշտը դրվում է որակի չափանիշներին համապատասխանության վրա: Հստակ սահմանազատվում են նաև արտաքին գնահատման նպատակները, այդ թվում՝ որակի համար բուհերի հաշվետու լինելը, կրթության որակի բարձրացումը, գնահատման թափանցիկության ապահովումը, գնահատման չափանիշների ազգային և միջազգային համադրելիության հասնելը և կրթական հաստատությունների համեմատական դասակարգումը:

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն:** Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված կլինեն, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- **Վերահսկում:** Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով՝ հասնում է հնարավորինս բարձր որակի:
- **Որակի բարեկավում:** Հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ բուհերը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին՝

- արդյո՞ք բուհն ունի որոշակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր,

- որոնք գործում են հաստատության բոլոր օդակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
- արդյո՞ք բուհը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը,
  - արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,
  - արդյո՞ք բուհը մշտադիտարկում է սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,
  - արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կշտկեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված քացրողումները,
  - արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի որակի ապահովման ընթացակարգերի մշակման, պահպանման և իրագործման ընթացքում կարևոր է հասկանալ, որ այն չի կարող սահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական մոտեցումների միջոցով:

**ՈԱԱԿ-ը** բուհերի որակի ապահովման արդյունավետությունը դիտարկում է շրջափուլային եղանակով: Նման դիտարկումների արդյունքները հանրությանը հասանելի են լինում: Դրանց հրապարակումը կարևոր է՝ ձեռք բերելու հանրության վստահությունը՝ որակը վերահսկելու և կառավարելու վերաբերյալ: Այս գործընթացում **ՈԱԱԿ-ը** ակնկալում է բոլոր շահակիցների մասնակցությունը:

## **Որակի արտաքին ապահովման շրջանակը**

Հայաստանի մասնացիտական կրթության որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման համապարփակ շրջանակ, որը կառուցված է չորս մեխանիզմների շորջ: Դրանք գնահատվում են ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների, որոնց նպատակն է օժանդակել բուհերին՝ հաստատության և իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնազնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու գործում:

Որակի արտաքին ապահովման գործընթացը ընթանում է երեք հիմնական փուլերով.

- որակի արտաքին ապահովման գործընթացի ենթակա կառույցի ինքնազնահատում,
- արտաքին փորձագետների այցելություն,
- երկու փուլերի արդյունքում կայացված որոշում և որոշման հրապարակում:

## **Որակի ապահովման գործընթացներ**

Համաձայն ՈԱԱԿ-ի մոտեցման՝ որակը համապատասխանությունն է սահմանված նպատակներին: Այսպես, հաստատություններն իրենց որդեգրած առաքելության շրջանակում կարող են ներառել նպատակներ, որոնց իրականացման աստիճանով է գնահատվելու որակը: Ցուրաքանչյուր ուսումնական հաստատություն պատասխանատու է իր կրթության որակի համար, այսինքն՝ ինքն է ներդնում որակի ապահովման ներքուիհական համակարգ և իրականացնում որակի ներքին ապահովման գործընթացներ: Այլ կերպ ասած՝ ուսումնական հաստատությունը սահմանում է իր գործունեության շրջանակը, իրականացնում է այն և հիմնավորում է դա երրորդ մարմնին՝ ՈԱԱԿ-ին:

ՈԱԱԿ-ը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման գործընթացն իրականացնում է ինստախուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման միջոցով:

ՈԱԱԿ-ը միակ և առաջին անկախ կառույցն է ՀՀ-ում, որն իրավասու է իրականացնել բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները, սահմանել այն հաստատություններն ու մասնագիտությունների կրթական ծրագրերը, որոնք բավարարում են պետա-

կան կրթական չափորոշիչների և հավատարմագրման չափանիշների պահանջները, թարմացնել հավատարմագրման չափանիշները, չափորոշիչները և ընթացակարգերը, առաջարկություններ ներկայացնել լրամշակման վերաբերյալ:

Պետական հավատարմագրումը. պետության կողմից մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության, մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման և որակի ճանաչման գործընթաց է: Հավատարմագրումը տրվում է որոշակի ժամանակահատվածով՝ երաշխավորելով, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրն ունի անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում կրթական գործունեություն իրականացնելու համար: Մասնագիտական կրթության հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել բուհերին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից:

### **Ինստիտուցիոնալ հավատարմագրում.**

Ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրումը պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական ուսումնական բոլոր հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել բուհի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել՝ արդյոք այն իրականացնում է իր առաքելությունը: Նշենք, որ ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար:

### **Ծրագրային հավատարմագրում.**

Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումն իրականացվում է բուհի նախաձեռնությամբ կամավորության սկզբունքով, բացառությամբ պետական ուսումնական հաստատությունների և բժշկական մասնագիտական

կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների:

Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է:

Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության և ոչ թե ամբողջությամբ հաստատության, կրթական ծրագիրն է: Այս գործընթացը քույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել՝ արդյոք այն ապահովում է ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով:

### **Հավատարմագրման ընթացակարգ**

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլով:

#### **Առաջին փուլ. ուսումնական հաստատության ինքնավերլուծություն:**

Հավատարմագրման գործընթացը ենթադրում է՝ հաստատություններն ուսումնասիրեն իրենց առաքելությունը, նպատակները, գործընթացները և ձեռքբերումները մանրամասն ինքնավերլուծության գործընթացի միջոցով:

**Երկրորդ փուլ. արտաքինգնահասումանկախփորձագետների խմբի կողմից:**  
Փորձագիտական այցի հիմնական նպատակն է պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հակասությունը, ծեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ ավելի լավ պատկերացնելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեությունը: Այսինքն, փորձագետներն իրականացնում են փորձագիտական վերլուծություն, որից հետո տրամադրվում են ձեռքբերումների մասին վկայություններ և խորհրդատվություն՝ աշխատանքների հետագա բարելավման նպատակով:

#### **Երրորդ փուլ. ՈՎԱԿ-ի Հավատարմագրման խորհրդի կողմից վերջնական փորձագիտական գեկույցի պատրաստում և որոշման կայացում:**

1. Ինստիտուցիոնալ փորձաքննությունը պարտադիր գործընթաց է թե՝ պետական, թե՝ ոչ պետական հաստատությունների համար: Ինստիտուցիոնալ փորձաքննության նպատակն է.

- որակի բարելավումը և հաշվետվողականության ապահովումը,
- բարձրագույն կրթության բարեփոխումների խթանումը,
- որակի ապահովման գործընթացին բուհերի, այդ թվում նաև պետական, ներգրավման երաշխավորումը:

Ինստիտուցիոնալ փորձաքննության շրջանակը հաստատության կրթական ռազմավարության իրականացման ընթացքի և արդյունքների գնահատումն է:  
Ինստիտուցիոնալ փորձաքննության անցկացման արդյունքներն են.

### **Դրական արդյունքներ՝**

- որակյալ կրթության հավաստում,
- որակի ապահովման գործընթացում ներգրավվածության հավաստում:

### **Բացասական արդյունքներ՝**

- գործունեության բույլտվության (լիցենզիա) վերահաստատման անհրաժեշտություն:
- 2. Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումը կամավոր գործնքաց է բոլոր բուհերի համար.  
ա. կրթական ծրագրի հավատարմագրման նպատակն է հաշվետվողականության ապահովումը, ճանաչումը և որակի բարելավումը,  
բ. հավատարմագրման թիրախը առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է,

### **Ծրագրային հավատարմագրման արդյունքներն են.**

- պետական ֆինանսավորման հատկացումը. կառավարությունը ֆինանսական միջոցներ կհատկացնի միայն ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրված և պետական գրանցամատյանում գրանցված մասնագիտության կրթական ծրագրերին:
- Որակավորումների և կրեդիտների ճանաչում ազգային և միջազգային մակարդակներում. միայն հավատարմագրված հաստատություններում ձեռք բերված կրեդիտներն են ճանաչվելու և նպաստելու շարժունությանը:
- Աշխատաշուկայի ազդակներ. հավատարմագրված որակավորումներն առավելություն են ունենալու աշխատաշուկայում,

ինչպես նաև ապահովելու են ոչ պետական բուհերի շուկայի բափանցիկությունը:

- ՈԱԱԿ-ին է տրված գրանցամատյանում փոփոխություններ կատարելու իրավասությունը, որի հիման վրա կառավարությունը կայացնելու է ֆինանսավորում հատկացնելու որոշում: Եթե որևէ հաստատություն նախընտրում է հավատարմագրվել արտասահմանյան որևէ գործակալության կողմից, նա կարող է դա անել միայն ՈԱԱԿ-ի համաձայնությամբ:

### **Անցումային շրջանի ժամանակացույցը.**

- Որակի ապահովման ներքին համակարգերի ներդրում,
- Ինստիտուցիոնալ հավատարմագրում մինչև 2014թ.,
- Ծրագրային հավատարմագրում մինչև 2016թ.:

## ԳԼՈՒԽ 2. ՀՊՏՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

### 2.1 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը

#### 2.1.1 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ելակետային սկզբունքները, նպատակներն ու խնդիրները

ՀՊՏՀ Որակի ներքին ապահովման համակարգերի կառուցումը ուղղորդվում է Եվրոպական շափորոշչներում և ուղենիշներում ձևակերպված հետևյալ հիմնարար սկզբունքներով.

- ՀՊՏՀ-ն է կրում առաջնային պատասխանատվություն կրթության որակի ապահովման համար;
- ՀՊՏՀ-ն կրթության որակի ապահովման համար հաշվետու է իր ուսանողներին, գործատուներին և հիմնադիրներին (կառավարությանը);
- ՀՊՏՀ-ն պետք է կարողանա հավաստելիր տրամադրած կրթության որակը երկրում և միջազգայնորեն;
- ՀՊՏՀ կրթական ծրագրերի որակը շարունակաբար բարելավվում է՝ ուսանողների և այլ շահակիցների սպասելիքներին համահունչ։

Այս սկզբունքների իրագործման հիման վրա սահմանվում են ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ հիմնական նպատակները՝

- 1) պահպանել ՀՊՏՀ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համար սահմանված կրթական շափորոշչները,
- 2) ապահովել կրթության որակի համար ՀՊՏՀ հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադիրների և ֆինանսավորող այլ կազմակերպությունների առջև,
- 3) ստեղծել մեթոդական և կազմակերպական հիմք՝ ՀՊՏՀ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար,

- 4) խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը ՀՊՏՀ-ում,
- 5) նպաստել ՀՊՏՀ առաքելության իրականացմանը՝ նրա տեսլականին, ուղղմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:
- Սահմանված նպատակներից բխում են ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ խնդիրները՝
- ապահովել կրթական ծրագրերի պատշաճ մշակումը, հաստատումը, ընթացիկ մոնիթորինգը, պարբերական վերանայումն ու շարունակական բարելավումը՝ որակի ապահովման սահմանված ընթացակարգերի կիրառմամբ,
  - ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի իրականացման որակի ինքնազնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարձագրումը իրականացնելու համար,
  - որակի ապահովման համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ,
  - ապահովել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, իմնական գործատուների և արտաքին փորձագետների մասնակցությունը,
  - ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար,
  - ուսանողների համար ստեղծել ուսումնառության պատշաճ հնարավորություններ՝ ծրագրերի ակնկալվող կրթական վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար,
  - երաշխավորել որակի ներքին ապահովման քաղաքականության և ուղղմավարության համապատասխանությունը ՀՊՏՀ տեսլականին, առաքելությանը և ուղղմավարական նպատակներին:

Այս խնդիրների լուծումը, որին պետք է ուղղվի ՀՊՏՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ուղղմավարությունը, հիմք է ստեղծում վերևում սահմանված նպատակների իրականացման համար:

## **2.1.2 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի ընդհանուր նկարագրությունն ու կազմակերպական կառուցվածքը**

**Կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները ՀՊՏՀ-ում.**

ՀՊՏՀ-ում կրթության որակի վրա ազդող էական գործոնները, որոնք Համալսարանի կողմից կառավարման կարիք ունեն, ներկայացված են ստորև:

**Կրթական ծրագրերը և դրանց իրականացման որակը՝**

- կրթական ծրագրերի չափորոշիչները և մասնագիտության որակավորման բնութագրիչները,
- ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,
- ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները,
- ուսանողական համակազմի որակական բնութագրերը,
- ուսումնական գործընթացի կազմակերպումը և կառավարումը:

**Դասախոսական կազմի որակը՝**

- դասախոսական կազմի որակավորման մակարդակը,
- դասավանդման հմտությունները:

**Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները՝**

- ուսումնական և մեթոդական գրականությունը,
- տեղեկատվական ռեսուրսները և տեխնոլոգիաները,
- ուսումնառության աջակցման ծառայությունները:

**Կրթական ծրագրերի կապը աշխատաշուկայի և գործատուների հետ՝**

- ծրագրի (մասնագիտության) և համապատասխան որակավորման պահանջվածությունը աշխատաշուկայում,
- պոտենցիալ գործառուների ներգրավվածությունը ծրագրի մշակման և/կամ իրականացման գործընթացներում:

**Որակի ներքին ապահովման համակարգը և կիրառվող մեխանիզմները՝**

- Որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը,
- Որակի գնահատման և ապահովման ընթացակարգերը:

## **Որակի ներբուհական գնահատման հիմնական օբյեկտները ՀՊՏՀ-ում.**

- կրթական ծրագրերը և դրանց առանձին քաղադրիչները,
- ուսանողների ձեռք բերած կրթական վերջնարդյունքները,
- պրոֆեսորադասախոսական կազմի որակը,
- դասավանդման, ուսումնառության և գնահատման որակը,
- ուսումնառության ռեսուրսները և ուսանողական օժանդակ ծառայությունները,
- տեղեկատվության ներքին և արտաքին համակարգերը,
- որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը:

**ՀՊՏՀ որակի ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և պատասխանատվությունների բաշխումը նրանց միջև.**

## **ՀՊՏՀ կառավարման խորհուրդը՝**

- հաստատում է որակի ապահովման քաղաքականությունը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, ՀՊՏՀ տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման միջոցառումներ:

## **ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը՝**

- իրականացնում է որակի ներքին ապահովման համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,
- ապահովում է ներգրավված հիմնական կառույցների միջև գործառնական կապերն ու փոխգործակցությունը, մասնավորապես՝ ֆակուլտետների, որակի ապահովման բաժնի և առնչվող այլ ստորաբաժանումների միջև:

## **ՀՊՏՀ որակի ապահովման խորհուրդը՝**

- հանդես է գալիս որպես փորձագիտական և խորհրդատվական մարմին՝ գնահատելու համար որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին,

- հաստատում է որակի ապահովման վերաբերյալ հայեցակարգային, կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- որակի ապահովման խորհրդի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՊՏՀ ռեկտորը: Խորհրդի կազմը հաստատվում է ՀՊՏՀ ռեկտորի կողմից, որակի ապահովման խորհրդի ձևավորումը և հետագա աշխատանքների կազմակերպումը ապահովում է ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը: Որակի ապահովման խորհրդի անդամներն են՝ ՀՊՏՀ ռեկտոր, ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի պետը, 2 դեկաններ, 2 ամբիոնի վարիչներ, ուսումնամեթոդական բաժնի պետը, վարչական կազմի ներկայացուցիչ, ուսանող, գործառություն:

### **Որակի ապահովման բաժինը՝**

- մշակում է որակի ներքին ապահովման ընթացակարգեր կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը ՀՊՏՀ ստորաբաժանումներում,
- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման համար,
- պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմի (ուսանողական հարցումներ) մշակման համար,
- գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը:

### **ՀՊՏՀ որակի աշխատանքային խումբը՝**

- աշխատանքային խումբը ձևավորվում է բուհի պրոֆեսորա-

դասախոսական, ուսանողական և վարչական կազմի ներկայացուցիչներից, գործատուներից և շրջանավարտներից,

- իրականացնումէՀՊՏՀինստիտուցիոնալ(Ենթակառուցվածքային) ինքնազմահատման գործընթացը,
- ՀՊՏՀ ինքնազմահատման գործընթացի շրջանակներում հավաքագրում, ընդհանրացում, վերլուծում և համադրում է անհրաժեշտ տվյալները,
- կազմում էՀՊՏՀ ինստիտուցիոնալ (Ենթակառուցվածքային) ինքնազմահատման գեկույցի նախնական տարրերակը,
- համագործակցում էՀՊՏՀ Որակի ապահովման բաժնի հետ՝որակի ապահովման գործընթացների իրականացման նպատակով,
- իրականացնում է որակի ներքին ապահովման հիմնախնդիրներից բխող այլ գործառույթներ:

## ՀՊՏՀ ֆակուլտետներ՝

- պատասխանատու են ֆակուլտետի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,
- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման, իրականացման ընթացիկ մոնիթորինգի ու պարբերական վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, ուսումնական գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակության այլ միջոցներ կրթական ծրագրերի հաջող իրականացման համար՝ ծրագրերի պահանջներին համապատասխան,
- կազմակերպում են ֆակուլտետի կրթական ծրագրերի ինքնազմահատումը և համապատասխան գեկույցի կազմումը՝ ծրագրերի տարեկան մոնիթորինգի, պարբերական վերանայման և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում:

## **Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները՝**

- վերահսկում են ֆակուլտետներում կրթական ծրագրերի մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,
- վերահսկում են կրթական ծրագրերի պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովածությունը,
- պատասխանատու են ֆակուլտետում ուսուցման որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև Համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրազործման հսկողության համար:

## **ՀՊՏՀ ուսանողները՝**

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ընդգրկված են ՀՊՏՀ և ֆակուլտետների գիտական խորհուրդներում՝ ֆակուլտետների որակի ապահովման հանձնաժողովներում,
- մասնակցում են ՀՊՏՀ որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի մասնակցում են ՀՊՏՀ ինքնա-գնահատման գործընթացներին՝ որպես ինքնա-գնահատման աշխատանքային խմբի անդամներ:

## **Արտաքին գնահատողները (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ)՝**


- կատարում են Համալսարանի գործունեության, որակի ներքին ապահովման համակարգի և կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում,
- ընդգրկված են շրջանավարտների ավարտական ամփոփիչ առեստավորման (ավարտական ամփոփիչ քննության և ավարտական շխատանքի պաշտպանության) հանձնաժողովներում,

- ՀՊՏՀ նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են ՀՊՏՀ-ում իրենց ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- մասնակցում են ՀՊՏՀ շրջանավարտներից գործառուների բավարարվածության հարցումներին:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեման: Այն ցույց է տալիս համակարգում ներգրավված հիմնական միավորների և կառույցների հիերարխիկ կապը:

#### Գծապատկեր 1.

#### ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական կառույցվածք



## **2.1.3 ՀՊՏՀ որակի ապահովման հիմնական գործընթացները**

Ստորև ներկայացված են ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հիմնական գործընթացներն ըստ առանձին ոլորտների:

### **Սահմանված կրթական չափորոշիչների պահպանում.**

- կրթական չափորոշիչները տվյալ որակավորմանը համապատասխան մակարդակի վրա են՝ որոշված Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) Որակավորումների շրջանակով և Որակավորումների ազգային շրջանակով (ՈԱՇ),
- կրթական չափորոշիչները բավարարում են համապատասխան պետական, մասնագիտական, օրենսդրական մարմինների և նմանատիպ այլ հաստատությունների պահանջներին,
- կրթական չափորոշիչները պարբերաբար վերանայվում են՝ նրանց արդիականությունն ու համապատասխանությունն ապահովելու նպատակով,
- կրթական չափորոշիչների մշակման, մշտադիտարկման կամ վերանայման ընթացքում օգտագործվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անկախ փորձագետների հետադարձ կապը:

### **Կրթական ծրագրերի որակի ապահովում.**

- ծրագրերի պլանավորում և մշակման արտոնում,
- ծրագրերի մշակում և փաստաթղթային փաթեթի կազմում,
- ծրագրերի ներքին փորձաքննություն և հաստատում,
- ծրագրերի իրականացման վերահսկում (մոնիթորինգ),
- ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում:

### **Ուսանողների գնահատում.**

- դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների գնահատում (ընթացիկ և եզրափակիչ քննություններ),
- ծրագրի կրթական վերջնարդյունքների գնահատում (ավարտական ամփոփիչ ատեսավորում):

## **Դասախոսական կազմի որակի ապահովում.**

- ուսումնառության և դասավանդման գնահատում,
- դասախոսների վերապատրաստում և կատարելագործում,
- դասախոսական պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջրաշման և նյութական խրախուսման գործընթացներ:

## **Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում.**

- կրթական ծրագրի պահանջներին ուսումնառության ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի համապատասխանության գնահատում,
- ուսանողական համակազմի կրթական և անհատական կարիքների բացահայտում և գնահատում,
- օժանդակ ծառայությունների որակից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումների իրականացում:

Հատկապես կարևորվում է կրթական ծրագրերի որակի ապահովման խնդիրը:

## **2.2 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական սկզբունքները**

Որակի ապահովման գործընթացներում ՀՊՏՀ հիմնական մոտեցումը հիմնված է Համալսարանում առկա ավանդույթների, ձևավորված որակի մշակույթի և սահմանված ռազմավարական նպատակների ու խնդիրների իրականացման սեփական ներուժի վրա: Ըստ այդմ, ստորև ներկայացված են ՀՊՏՀ որակի ապահովման հիմնական սկզբունքները:

- **Որակի ապահովման համակարգի կենտրոնացված կանոնակարգում և ընթացակարգային կարգավորում:** Որակի ապահովման գործընթացների համար ՀՊՏՀ-ն ունի միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնց հետևում են ուսումնական բոլոր ստորաբաժանումները: Այս մակարդակում հիմնական համակարգող դերը վերապահվում է ՀՊՏՀ Գիտական խորհրդին, որն իրականացնում է համապատասխան աշխատանքների

պլանավորումը, կանոնակարգային/չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, որակի ապահովման նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը:

- **Որակի ներքին ապահովման գործընթացների ապակենտրոնացված իրականացում:** Եթե ՀՊՏՀ-ն ընդհանուր պատասխանատվություն է կրում իր շնորհած որակավորումների որակի համար, ապա առանձին մասնագիտական ասպարեզներումկրթական չափորոշիչների և կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացների համար պատասխանատու են հիմնականում ֆակուլտետներն ու ամբիոնները: Նմանապես, ՀՊՏՀ մասնաճյուղերը պատասխանատու են իրենց կրթական ծրագրերի որակի ապահովման համար: Որակի ապահովման ապակենտրոնացված գործընթացների համապատասխանությունը համալսարանական միասնական չափանիշներին ապահովում է կանոնակարգային/ընթացակարգային միասնական հենքի՝ Որակի ապահովման բաժնի և Որակի ապահովման խորհրդի միջոցով:
- **Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ընդունություն:** ՀՊՏՀ-ն ապահովում է պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ամենալայն մասնակցությունը որակի պահպանման և բարելավման գործընթացներում, խրանում անհատական և թիմային նախաձեռնությունները Համալսարանի որակի ապահովման գործընթացներում: Այս խնդիրները լուծվում են ֆակուլտետի մակարդակով, իսկ Որակի ապահովման և Գիտական խորհուրդը ստանձնում են համապատասխան վերահսկողական մեխանիզմները:
- **Կրթական ծրագրերի հաստատման պաշտոնական ընթացակարգերի առկայություն:** Կրթական ծրագրերի հաստատման գործընթացը բաղկացած է երեք իրարահաջորդող փուլերից՝ ծրագրի մշակման արտոնում (նախնական հաստատում), ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում և ծրագրի առաջարկի փորձաքննություն, փորձաքննության եզրակացությունների կատարում և ծրագրի պաշտոնական հաստատում:

- **Ուսանողների, շրջանավարտների և գործատուների ներգրավում:** Ուսանողների, շրջանավարտների և գործատուների լիարժեք մասնակցությունը ՀՊՏՀ որակի ապահովման ներբուհական գործընթացներում ՈԱ համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է, ինչպես նաև Եվրոպական չափորոշիչների պահանջը: Նախատեսված է տարբեր ոլորտներում նրանց մասնակցության հետևյալ ձևեր՝
- դասավանդման և ուսուցման արդյունավետությունից ուսանողների բավարարվածության հարցումներ,
- կրթական ծրագրերից և ուսումնառության ռեսուրսներից շրջանավարտների բավարարվածության հարցումներ,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներ,
- ինքնավերլուծության կամ ինքնազնահատման ինստիտուցիոնալ ֆակուլտետային և ծրագրային գործընթացներ:
- **Փոխադարձ կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև:** Որակի ներքին գնահատումը արտաքին գնահատման հիմքն է և պետք է կառուցվի վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Ըստ այդմ, ՀՊՏՀ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնազնահատումը/ինքնավերլուծությունը հանդիսանում են որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների հիմնական փոխկապակցող օլակները:

## 2.3 ՀՊՏՀ որակի ապահովման համակարգի փաստաթղթավորումը

ՀՊՏՀ որակի ներքին ապահովման փաստաթղթային բազան բաղկացած է հետևյալ բաղադրամասներից.

1. **ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ**, որը ներկայացնում է համակարգի ընդհանուր նկարագրությունը և կազմակերպական կառուցվածքը, որակի բուհական բաղաքականության նպատակները և ռազմավարության հիմնադրույթները, որակի կառավարման սկզբունքները, գործառույթները

և պատասխանատվության բաշխումը կառավարման մակարդակների ու ստորաբաժանումների միջև, կապը և փոխազդեցությունը բուհական կառավարման այլ համակարգերի հետ, որակի ապահովման հիմնական գործընթացների համառոտ նկարագրությունը:

**2.Հրահանգչական փաթեթորակի ապահովման առանձին կազմակերպական գործառույթների վերաբերյալ**, որը նկարագրում է որակի գնահատման և/կամ ապահովման գործողությունների կատարման մեթոդներն ու մանրամասները:

**3.ՀՊՏՀ որակի ապահովման համակարգի տվյալների բազա**, որը կընդգրկի որակի վերաբերյալ բոլոր հաշվետվությունները, վերլուծական գեկույցները, հարցումների և այլ միջոցառումների ձևաթերթերն ու արձանագրությունները, ընդհանրապես, համակարգի տեղեկատվական ապահովմանը վերաբերող բոլոր նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև էլեկտրոնային տեղեկատվության կրիչները:

## **2.4 ՀՊՏՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը**

Որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպում է ՀՊՏՀ մտադրությունները որակի ապահովման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրագործման սկզբունքային ուղիները: Քաղաքականության իրականացման գործընթացը պահանջում է որոշակի ընթացակարգային ուղղորդում, որը մի կողմից՝ մանրամասն տեղեկատվություն է ապահովում այն միջոցների վերաբերյալ, որոնցով իրականացվում է քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ կարգաբերում և կոնկրետ գործողությունների է վերածում այդ միջոցները: ՀՊՏՀ զարգացման ընդհանուր ռազմավարության կարևորագույն կառուցամասն է որակի շարունակական բարելավման ռազմավարությունը, որը ելնում է Համալսարանի ռազմավարական ծրագրի համապատասխան խնդիրներից և ապահովում դրանց գործնական իրականացումը:

Որակի ապահովման քաղաքականությունը, նրա ընթացակարգային հենքը և որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը ՀՊՏՀ որակի ապահովման համակարգի կարևորագույն բաղադրիչներն են::

## **ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականությունը**

ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է ՀՊՏՀ գործունեության բոլոր հիմնական ասպարեզները՝ նշանակետ ունենալով համապատասխանեցնելու դրանք Համալսարանի ուսումնավարական նպատակներին և ապահովելու ջանքերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար (մանրամասն տե՛ս 3-րդ գլուխ):

## **ՀՊՏՀ որակի ապահովման ընթացակարգերը**

ՀՊՏՀ որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և կոնկրետ գործողությունների վերածելու որակի ապահովման քաղաքականությունից բխող գործընթացները և ուղղողելու դրանց իրականացման ընթացքը (մանրամասն տե՛ս 3-րդ գլուխ):

## **ՀՊՏՀ որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը**

Որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համապատասխան: Դրա հիմնական նպատակն է ստեղծել և գործարկել աջակցող արդյունավետ մեխանիզմներ՝ Համալսարանի բոլոր մակարդակներում ուսման որակի կայուն և շարունակական բարձրացման համար, ինչպես նաև նախադրյալներ՝ որակի մշակույթի անշեղ զարգացման նպատակով:

ՀՊՏՀ-ն որակի շարունակական բարձրացման իր ռազմավարությունն իրականացնելիս ելնում է հետևյալ սկզբունքներից:

- 1) Ուսումնառության վերջնարդյունների հիման վրա կրթական ծրագրերի մշակում և իրականացում, որոնք բովանդակությամբ և մատուցման ձևությամբ գրավիչ են ուսանողների համար, համապատասխանում են գործառուների և մասնագիտությունների արդի պահանջներին և բարձրացնում են շրջանավարտների աշխատանքի անցնելու հնարավորությունները:

- 2) Ուսումնառության հնարավորությունների և փորձի բարելավում՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և կրթական տեխնոլոգիաների ներդրման և դրանց բազմագանեցման միջոցով:
- 3) Ուսումնական առաջադիմության բարձրացում՝ ուսանողների կրթական շահագրգովածության և ինքնուրույն աշխատանքի խթանման, ուսուցման պլանավորման մեջ նրանց դերակատարության մեծացման և կրթական ճկուն այլընտրանքային ուղեգծերի ներմուծման միջոցով:
- 4) Գնահատման համակարգերի կատարելագործում՝ առաջադիմությունը խթանող նորամուծական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ:
- 5) Կրթական միջավայրի բարելավում՝ ֆիզիկական և վիրտուալուսումնական ենթակառուցվածքներին, դասավանդմանն ու ուսումնառությանը աջակցող մեխանիզմների զարգացման և դասախոսների ու ուսանողների կարիքներին դրանց համապատասխանեցման ճանապարհով:
- 6) Ուսուցման կազմակերպման այլընտրանքային ճկուն ձևերի ներմուծում՝ ուսուցման և արտադրական փորձառության փուլերի գուգակցման, ուսուցման կազմակերպմանը պոտենցիալ գործատուների ներգրավման, հաճախումների ճկուն ռեժիմների և ուսուցման օնլայն ձևերի կիրառման միջոցով:
- 7) Դասավանդման որակի, արդյունավետության և մասնագիտական չափորոշիչների կատարելագործում՝ դասախոսական կազմի որակական ցուցանիշների բարձրացման, մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման ծրագրերի զարգացման, դասավանդման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներմուծման ճանապարհով:

## **ԳԼՈՒԽ 3. ՀՊՏՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

### **3.1 Ուսումնառության գնահատում**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը իրականացնում է ուսանողակենտրոն համակարգով ըստ ուսումնառության արդյունքի գիտելիքի գնահատման քաղաքականություն:

Ուսանողների ուսումնառության գնահատումը բարձրագույն կրթության ամենակարևոր քաղաքիչներից է: Գնահատման արդյունքները կարևոր են ուսանողների հետագա կարիերայի համար: Հետևապես, ուսումնառության գնահատումը պետք է իրականացվի մասնագիտորեն՝ հիմք ընդունելով ձեռքբերված ուսումնառության արդյունքները:

Գնահատումը դասավանդողներին և ուսումնառության գործընթացում ներգրավված այլ շահակիցներին արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում համալսարանում ուսուցման արդյունավետության և ուսումնառության գործընթացում ուսանողներին ցուցաբերվող աջակցության վերաբերյալ:

Ուսանողների ուսումնառությունը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում պետք է գնահատվի ընդունված չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով:


ՀՊՏՀ-ում դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է ներդնել և կիրառել ուսումնառության արդյունքին համապատասխան գիտելիքի գնահատման մեթոդաբանություն:

Համաձայն ստորև ներկայացված մոդելի (տե՛ս «Ուսումնառության գնահատման շրջափուլը»)՝ գնահատումը ծրագրի շարունակական կատարելագործմանն ուղղված հետադարձ կապի անընդհատ գործընթաց է:

Գնահատման շրջափուլը ուսանողակենտրոն կրթության առանցքային քաղկացուցիչն է: Այն մշտական մեխանիզմ է ապահովում

ծրագրի արդյունավետության վերահսկողության համար՝ նախանշելով ծրագրի առավել խնդրահարույց տարրերը և հավաստիացնելով ուսանողների ուսումնառության նպատակների կատարումը: Այն նաև թույլ է տալիս գնահատել ծրագրի նպատակների էվոլյուցիան որոշակի ժամանակահատվածում:

## Գ-ծապատկեր 2. Ուսումնառության գնահատման շրջափուլը



Համալսարանի գործունեության ինքնազնահատման կարևոր բաղադրիչ է հանդիսանում ուսումնառության գնահատումը, որը թույլ է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որքանով է հաջողվում լավ կրթել ուսանողներին: Այստեղ նախևառաջ պետք է ի նկատի ունենալ համալսարանում ուսանողների ուսումնառության գնահատման մեխանիզմների համակարգվածությունը: Այս համատեքստում գնահատումը ենթադրում է հետևյալ 4 հաջորդական գործընթացների փոխկապվածությունը.

- **Ուսուցման նպատակների հստակեցում:** Անհրաժեշտ է նախապես սահմանել, թե դասընթացի ավարտին ինչպիսի արդյունքներ պետք է ցուցաբերի լավ ուսանողը, այսինքն՝ թե ինչ գիտելիք պետք է ունենա և ինչ հմտություններ ու կարողություններ պետք է ցուցաբերի դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողը: Ինչպե՞ս և ինչպիսի՝ հատկանիշներով ենք մենք առանձնացնում ուսման մեջ հաջողակ ուսանողին:

- **Սահմանված կրթական արդյունքների չափում:** Որքանո՞վ են տվյալ ծրագրով կամ կրուսով նախատեսված արդյունքները համընկնում դրված նպատակների առավել լայն շրջանակին: Այստեղ կարևոր է սահմանել չափելի արդյունք, որը կհավասարի, թե որքանով է հաջողվել իրագործել դրված նպատակներից յուրաքանչյուրը և որոնց շնորհիվ հնարավոր կլինի չափել և գնահատել ձեռքբերված արդյունքները: Ընդ որում, նախ անհրաժեշտ է հստակ սահմանել գիտելիքի ստուգման նվազագույն պահանջները, որոնք բավարար կլինեն սահմանված գնահատման նվազագույն շեմը հայրահարելու համար: Առաջադրված նպատակները և դրանց հիման վրա սահմանված գնահատման չափանիշները պետք է եապես տարրերվեն ուսումնառության ընթացքում բավարար, լավ և գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար: Քանի որ այս փուլում են արտացոլվում դասընթացի կամ կրթական ծրագրի առավելություններն ու թերությունները, այն առավել հաճախ է ենթարկվում փոփոխության:
- **Գիտելիքի պարբերական ստուգումների իրականացում՝ ուսումնառության արդյունքների և սահմանված նպատակների համեմատության միջոցով:** Ինչպե՞ս կարող ենք պարզել, թե արդյոք ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռքբերումները համապատասխանում են հաջողված ուսումնառության մեր պատկերացումներին: Ընդհանուր առմամբ, որքանո՞վ է հաջողվել հասնել ուսումնառության սահմանված նպատակներին:
- **Ստացված տեղեկատվության օգտագործումն ի նպաստ բարեկաման, այլ կերպ՝ ծրագրի վերափոխում ուսուցման և ուսումնառության բարեկաման նպատակով:** Ինչպե՞ս ենք մենք ուսումնառության ընթացքում ստացված տեղեկատվությունն օգտագործում ծրագրի բարեկաման նպատակով: Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների և սահմանված նպատակների համեմատության արդյունքները՝ ծրագրի առանձին տարրերը, ներառյալ՝ գնահատման պահանջներն ու չափանիշները, ենթարկվում են համապատասխան փոփոխության՝ նախքան հաջորդ շրջափուլի մեջնարկը:

Ուսանողների ուսումնառության գնահատման ընթացակարգը կօգնի կառուցել դրված նպատակներին միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթաց, ընդլայնելով ուսանողների ուսումնառության բարելավման հնարավորությունները՝ ըստ առանձին դասընթացների և կրթական ծրագրերի:

### **Ուսանողների ուսումնառության ընթացակարգերը պետք է՝**

- նախագծվեն սպասվելիք ուսումնառության արդյունքների և այլ ծրագրերի նպատակների ձեռքբերման չափման համար,
- համապատասխանեն սահմանված նպատակներին,
- նպաստեն դրված նպատակների ձեռքբերմանը,
- սահմանեն գնահատման հստակ և իրատարակված չափանիշներ,
- բացառեն առանձին քննողների սուբյեկտիվ մոտեցումները գնահատման գործընթացում,
- պետք է հաշվի առնեն քննությունների կարգավորման բոլոր հնարավոր հետևանքները,
- ուսանողի բացակայության, հիվանդության կամ այլ մեղմացուցիչ հանգամանքի վերաբերյալ ունենան հստակ սահմանված կարգ,
- ապահովեն գնահատման գործընթացի իրականցումը՝ համալսարանի կողմից ընդունված ընթացակարգերին համապատասխան։

Գնահատման չափանիշները և ուսումնառության արդյունքներին համապատասխան գնահատման ձևերը և մեթոդները ներկայացվում են ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում, առարկայական ծրագրերում կամ դասընթացների նկարագրերում։

Թափանցիկության և իրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով՝ յուրաքանչյուր ուսումնական տարրա սկզբին ՀՊՏՀ-ում գործող բոլոր կրթական աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) համար մշակվում և իրատարակվում է ուսումնամեթոդական ուղեցույց՝ ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի և առաջադիմության բազմագործոնային գնահատման մեթոդաբանության վերաբերյալ։ Ուղեցույցը նախատեսված է բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնաօժանդակ անձնակազմի, կրթության ոլորտի մասնագետների, հետազոտողների և ուսանողների համար։

Տեղեկատվության հրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով՝ ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը տեղադրվում է ՀՊՏՀ պաշտոնական կայքում:

### 3.1.1 Գնահատման համակարգի սկզբունքները

1. Ուսանողի ստացած գիտելիքի, հմտությունների և կարողությունների որակը չափվում են գնահատականներով, այլ ոչ թե կրեղիտներով:
2. Ուսանողին հատկացվող կրեղիտների թիվը կախված է ուսումնառության՝ յուրացման ծավալից:
3. Յուրաքանչյուր ծրագիր և դասընթաց պետք է կազմվի հստակ՝ սահմանված ուսումնառության նպատակներին, գնահատման մերողներին և չափելի արդյունքներին համապատասխան:
4. Ուսանողների գիտելիքի գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:
5. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները<sup>3</sup> միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:
6. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը<sup>4</sup> կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:
7. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ «ստուգված/ չստուգված» սկզբունքով:
8. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (տարբերակված գնահատում) անկախ՝ ամփոփիչ գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից

3 Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեղիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

4 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) գնահատականների կրեղիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեղիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ):

հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ:

9. Ուսուցման արդյունքի հաշվարկման կրեդիտային համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գնահատման դաշտում, լսարանայինի հետ, ընդգրկված է նաև ուսանողների արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը: Հետևաբար, գնահատման նույն հարթությունում են գտնվում լսարանային հաճախումների ընթացքում ուսանողների թեստային և այլ գրավոր աշխատանքները, սեմինարների և գործնական պարապմունքների բանավոր պատասխանները, դասախոսի հետանիատական աշխատանքը: Այսինքն՝ Համալսարանում ստեղծվել են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվության տրամադրման հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:
  10. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:
  11. Ուսանողների գիտելիքի գնահատման գործընթացի արդյունավետությունը գնահատելու նպատակով պետք է մշակվեն հարցաշարերի ձևաչափեր, պարբերաբար իրականացվեն հարցումներ ուսանողության և դասախոսների շրջանում, վերլուծվեն հարցումների արդյունքները և ներկայացնեն բարելավմանն ուղղված առաջարկներ:
  12. Գնահատման հիմքում ընկած ուսումնառության արդյունքները դասընթացի ժամանակ դասախոսի կողմից փորձարկման դեպքում կարող են փոփոխության ենթարկվել, սակայն այդ նման փոփոխությունը պետք է միտված լինի ուսումնառության չափելի արդյունքների սահմանմանը և դրանց գնահատման մեխանիզմների բարելավմանը:
- ՀՊՏՀ-ում ներդրվել և գործում է ուսանողների գիտելիքի ստուգման և գնահատման բազմագործուն համակարգ:

### **3.1.2 Գնահատման բազմագործոն համակարգ**

Գնահատման բազմագործոն համակարգը գործում է հետևյալ ընթացակարգով.

- Յուրաքանչյուր առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները, գիտելիքի ստուգման միջանկյալ և ամփոփիչ փուլերը, անհատական աշխատանքը, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին ցուցաբերած ակտիվությունը:
- Գիտելիքի ստուգումները ՀՊՏՀ-ում կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր՝ համաձայն գործող ընթացակարգի: Ընդ որում, գիտելիքի ստուգման ձևի ընտրությունը պետք է բխի տվյալ դասընթացի բնույթից և դասավանդման մեթոդից:
- Առաջադիմության գնահատումը կատարվում է համապատասխան ընթացակարգով՝ հաշվի առնելով ուսումնառության որակի գործոններն ու դրանց ամրագրված կշիռները (համաձայն Համալսարանում կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի կիրառման և առաջադիմության բազմագործոնային գնահատման ընթացակարգի):

### **3.1.3 Ուսումնառության արդյունքների գնահատման ընթացակարգ**

**Գնահատման հիմքում ընկած գործոնները և դրանց գանահատման ընթացակարգերը.**

#### **Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն**

Ուսումնառության ընթացքում ուսանողի հաճախումները և ընթացիկ ակտիվությունը հանդիսանում են գնահատման ենթակա գործոններ, որոնք դասախոսի կամ վերջինիս հսկողությամբ՝ խմբի ավագի կողմից հաշվառվում են դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ հատուկ մատյաններում:

Ոչ կանոնավոր հաճախումներն ուղղակիորեն անդրադառնում են ուսանողի ընթացիկ ակտիվության գնահատականի վրա, որի համար ՀՊՏՀ-ում հաստատվել և գործում է հաճախումներից ելնելով ընթացիկ ակտիվության գնահատման սանդղակ:

Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է կիսամյակի ընթացքում գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների կամ դասախոսությունների ժամանակ կատարված հարցումների հիման վրա:

Դասընթացի ընթացքում ուսանողի ընթացիկ ակտիվության գնահատումը կարող է իրականացվել դասախոսի հայեցողությամբ, ինչպես անհատական հարցումների, այնպես էլ առանձին առաջադրանքների կատարման հիման վրա:

Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես տվյալ ուսանողի հարցումների գանահատումների պարզ միջին թվաբանական:

## **1. Անհատական աշխատանքների կատարման և գնահատման ընթացակարգ**

Մասնագիտական և մասնագիտացման դասընթացների համար կիսամյակի ընթացքում ուսանողին հանձնարարվում է անհատական աշխատանք, որի իրականացման ընթացքում դասախոսն ուսնողի հետ արտալսարանային խորհրդատվական աշխատանք է կատարում:

Անհատական աշխատանքների թեմաները, տրման ձևը, կառուցվածքը և ծավալը հաստատվում են համապատասխան մասնագիտական ամբիոնի կողմից: Անհատական աշխատանքը գնահատվում է դասախոսի կողմից նախնական ուսումնասիրությունից և ուսանողի բանավոր պաշտպանությունից հետո՝ համաձայն գնահատման սանդղակի:

## **3. Գիտելիքի միջանկյալ և ամփոփիչ ստուգումներ**

### **Քննությունների անցկացման գրավոր կարգ (համակարգչային, թղթային թեստային)**

ՀՊՏՀ-ում գիտելիքի ստուգումները կարող են իրականացվել գրավոր կամ թեստային համակարգով, ընդ որում, վերջինի դեպքում միջանկյալ և ամփոփիչ քննություններն անցկացվում են համակարգչային թեստային կամ թղթային թեստային տարրերակներով:

Նշված տարրերակներով գիտելիքի ստուգումներն իրականացվում են՝ համաձայն սահմանված ընթացակարգերի:

## **Քննությունների անցկացման բանավոր կարգ**

ՀՊՀ-ում բանավոր քննություններ անցկացվում են ամփոփիչ ատեստավորման ժամանակ, ինչպես նաև հատուկ սահմանված և նախապես համաձայնեցված դեպքերում: Նախատեսվում է փոփոխել գիտելիքի գնահատման քաղաքականությունը առաջնորդվելով դասավանդում-ուսումնառություն-գնահատում առանցքային հայեցակարգային դրույթից:

### **4. Պրակտիկա**

#### **4.1. Բակալավրիատում ուսումնական և արտադրական**

#### **պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգ**

Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպվում են ՀՀ-ում գրանցված և գործող կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և գիտահետազոտական կազմակերպություններում:

Յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է երկու դեկավար՝ համապատասխան մասնագիտական ամբիոնում և պրակտիկայի վայրում:

Ամբիոնի կողմից նշանակված դեկավարը պարտավոր է պարբերաբար ծանոթանալ ուսանողի պրակտիկայի ընթացքին՝ նշանակելով ուսանողի հետ հանդիպման օրեր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ այցելելով պրակտիկայի վայր:

Նախքան պրակտիկայի սկիզբը ուսանողներին տրամադրվում են օրագիր, ուղեգիր և համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից մշակված պրակտիկայի ծրագրերը, որոնցում ներառված են պրակտիկայի վայրում ուսանողին առաջնորդող առաջադրանքներ:

Պրակտիկայի ավարտին ուսանողը ներկայացնում է պրակտիկայի հաշվետվություն, որի պաշտպանությունը կազմակերպվում է ամբիոնի կողմից հաստատված հանձնաժողովի կողմից:

Պրակտիկան գնահատվում է համաձայն պրակտիկայի վայրում ձեռքբերված գիտելիքի և գործնական բնույթի հմտությունների:

Պրակտիկայի գնահատման համար լուծարք չի կազմակերպվում:

## **4.2. Մագիստրատուրայում գիտամակնավարժական և գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգ**

Մագիստրոսական կրթական ծրագրով ՀՊՏՀ-ում նախատեսված է գիտամակնավարժական և գիտահետազոտական պրակտիկա:

Ցուրաքանչյուր մագիստրանտի համար նշանակվում է երկու դեկավար՝ համապատասխան մասնագիտական ամբիոնում և պրակտիկայի վայրում:

Ամբիոնի կողմից նշանակված դեկավարը պարտավոր է պարբերաբար ծանոթանալ մագիստրանտի պրակտիկայի ընթացքին՝ նշանակելով ուսանողի հետ հանդիպման օրեր, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ այցելելով պրակտիկայի վայր:

Գիտամանկավարժական պրակտիկան անցկացվում է Համալսարանում, որի ընթացքում մագիստրանտը գործնական մասնակցություն է ունենում դասավանդման, ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման գործընթացին:

Գիտահետազոտական պրակտիկայի անկացման վայր կարող են հանդիսանալ գիտահետազոտական ինստիտուտները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ-ում գրանցված և գործող այլ կազմակերպություններ:

Գիտահետազոտական պրակտիկայի արդյունքը պետք է լինի մագիստրանտի մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների դրսևորումը, որն էլ պետք է դրվի պրակտիկայի գնահատման հիմքում:

Նախքան պրակտիկայի սկիզբը մագիստրանտներին տրամադրվում են օրագիր, ուղեգիր և համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից մշակված պրակտիկայի ծրագրերը, որոնցում ներառված են պրակտիկայի վայրում ուսանողին առաջնորդող առաջադրանքներ:

Պրակտիկայի ավարտին մագիստրանտը ներկայացնում է պրակտիկայի հաշվետվություն, որի պաշտպանությունը կազմակերպվում է ամբիոնի կողմից հաստատված հանձնաժողովի կողմից:

Պրակտիկան գնահատվում է համաձայն պրակտիկայի վայրում ձեռք բերված գիտելիքի, գիտահետազոտական և վերլուծական բնույթի հմտությունների:

Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի գնահատման համար լուծարք չի կազմակերպվում:

Կրթության միջազգային զարգացումները և աշխատաշուկայի պահանջները նոր մարտահրավերներ են առաջ քաշում պրակտիկայի հայեցակարգային փոփոխությունների համար:

### **3.1.4 Դասավանդման սկզբունքներ և ընթացակարգեր**

Դասախոսի իրավունքներն ու պարտավորությունները.

- Դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը դիտարկվում է միասնական տրամաբանության մեջ:
- Դասախոսը ակադեմիական ազատություններ ունի ընտրելու դասավանդման և գնահատման մեթոդները:
- Դասընթացի սկզբին դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոքացնել դասընթացի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքներին, դրանց գնահատման սկզբունքներին և ընթացակարգերին:
- Դասընթացի սկզբին ուսանողներին պետք է հասանելի լինեն կրթական և առարկայական ծրագրերը:
- Ուսանողներին պետք է տրամադրվի դասընթացի յուրացման համար պարտադիր և խրախուսվող լրացուցիչ գրականության ցանկը:
- Ուսանողներին պետք է հասանելի լինեն գիտելիքի ընթացիկ և ամփոփիչ ստուգման (գնահատման) հարցաշարերը:

Դասընթացի սկզբին դասախոսը կարող է հարցման միջոցով իրականացնել ուսանողների կրթական կարիքների վերհանում, իսկ դասընթացի ավարտին՝ դասավանդման մեթոդաբանության գնահատում: Հարցման ընթացքում ստացված տվյալների վերլուծության արդյունքները պետք է դասախոսի կողմից հաշվի առնվեն և հիմք հանդիսանան դասավանդման մեթոդների կատարելագործման համար՝ ապահովելով դասընթացի բարելավման շրջափուլի շարունակականությունը:

## **3.2 Պրոֆեսորադասախոսական համակազմի հավաքագրում, ընտրություն և մասնագիտական գարգացում**

### **3.2.1 Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման քաղաքականություն**

Վերջին տարիներին ՀՀ կրթական շուկան ընդգծված ձևով դրսնորում է նոր միտումներ, որոնք սկզբունքորեն փոխում են այդ շուկայում ձևավորված վիճակը՝ դրան հաղորդելով մրցակցային միջավայրի նոր բաղադրիչներ: Արդյունքում, ՀՊՏՀ-ն ծավալում է կրթական շուկայի նոր պահանջներին համահունչ գործունեություն՝ մրցակցությանը դիմակայելու նպատակով: Այս պահանջներն անհրաժեշտ են հաշվի առնել պրոֆեսորադասախոսական համակազմի (այսուհետ՝ ՊԴՀ) ընտրության և ձևավորման, ինչպես նաև որակավորման բարձրացման կազմակերպման և այդ գործընթացների հետադարձ կապի ապահովման համար:

ՀՊՏՀ ՊԴՀ-ի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը հիմնվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բուհական և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների և ՀՊՏՀ կանոնադրության վրա:

ՀՊՏՀ-ում գործում են մի շարք կարգեր, կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և մասնագիտական գարգացմանը: Այս գործընթացի բաղկացուցիչ մասն է կազմում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը», որը սահմանում է գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման կարգը, պաշտոնների առաջխաղացման չափանիշները, մրցությային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները:

ՀՊՏՀ-ում գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունք-

ներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի քաց մրցութային կարգով ընտրությունը (բացառությամբ ամբիոնում ազատ հաստիքի առկայության դեպքում մինչև 1 տարի ժամկետով պաշտոնում ռեկտորի կողմից հրամանագրման, վերականգնվելու, մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու կամ համալսարանում նոր բացվող ամբիոնի կազմի ձևավորման դեպքերի): Մրցութային ընտրության գերակա նպատակը համալսարանի հիմնական **ՊԴՀ** ձևավորումն է: Կրթական ծրագիրն իրականացնելու համար **ՀՊՏՀ-ն** կարող է հրավիրել համատեղությամբ աշխատող լրացուցիչ դասախոսական կազմ հաստիքների 10-20%-ի չափով (0.25 և/կամ 0.5 դրույքաշափով, ժամավճարով դասավանդողների դեպքում), ովքեր հրամանագրվում են ռեկտորի կողմից մինչև մեկ տարի ժամկետով:

**ՀՊՏՀ-ում** այլ աշխատանքի փոխադրելը, աշխատանքի էական պայմանների փոփոխությունը և աշխատանքային պայմանագրի լուծումը կատարվում է **ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին** համապատասխան և համալսարանի ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում:

Համալսարանի գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմն ընդգրկում է հետևյալ պաշտոնները՝ դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս:

Պրոֆեսորադասախոսական և գիտամանկավարժական համակազմի նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

**Գաղափարական** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձիք, ովքեր տվյալ մասնագիտությամբ դիպլոմավորված մասնագետ են, կամ ունեն մագիստրոսի որակավորման աստիճան:

**Ասիստենտի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձիք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան (հանձնել են որակավորման քննությունները, կամ կուտակել են հետազոտողի կրթական ծրագրով 175 կրեդիտ, ունեն հրապարակված գիտական աշխատանքներ):

**Դոցենտի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձիք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և (կամ) դոցենտի գիտական կոչում, ունեն հրատարակված առնվազն 5 գիտական աշխատանք, որից 3-ը՝ գրախոսվող ամսագրերում, համահեղինակ են (կամ հեղինակ են) դասագրքի կամ

ուսումնական ձեռնարկի, ունեն առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ գիտական կոչումներ շնորհող հաստատություններում, իսկ գիտական աստիճան չունեցող, սակայն դոցենտի գիտական կոչում ունենալու դեպքում ունեն առնվազն 20 տարվա գիտամանկավարժական ստաժ գիտական կոչումներ շնորհող հաստատություններում:

**Պրոֆեսորի** պաշտոն կարող են գրադեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում, ունեն հրատարակված առնվազն 20 գիտական աշխատանք, որից առնվազն 10-ը՝ գրախոսվող ամսագրերում, համահեղինակ են (կամ հեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի, կամ մենագրության, թեկնածուի գիտական աստիճան ունենալու դեպքում ունեն առնվազն 30 տարվա, իսկ գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալու դեպքում ունեն առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ գիտական կոչումներ շնորհող հաստատություններում:

**Ամբիոնի վարիչի** պաշտոն կարող են գրադեցնել այն անձինք, ովքեր ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում, և գիտությունների թեկնածունի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում, ունեն առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ գիտական կոչումներ շնորհող հաստատություններում: Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները սահմանվում են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչների ընտրության ընթացակարգով»:

**Դեկանի** պաշտոն կարող են գրադեցնել այն անձինք, ովքեր ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում և գիտությունների թեկնածունի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում: Դեկանի պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները սահմանվում են դեկանի ընտության կանոնակարգով:

Գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնավարման տարիքային սահմանները կարգավորվում են ՀՀ

աշխատանքային օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ։ Գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմի 70 տարին լրանալուց հետո դասավանդման իրավունք է տրվում միայն գիտական խորհրդի որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ անձի մասնագիտական և անձնական կարողությունները։

Բացառիկ դեպքերում ռեկտորն իրավասու է մեկական տարով, շարունակաբար՝ մինչև 3 տարի որպես դասախոս, ասխատենտ, դոցենտ, պրոֆեսոր կամ ամբիոնի վարիչ հրամանագրել վերը նշված պաշտոնների պահանջներին համապատասխանող այն անձանց, ովքեր ունեն աշխատանքային մեծ փորձ, բազմավաստակ գիտնական մանկավարժ են և վայելում են կողեկտիվի հարգանքը։

Ըստ պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ բնագավառները։

**Պրոֆեսորի համար՝** դասախոսությունների վարում, գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների դեկավարում, մագիստրոսական դասընթացների հիմնում և կազմակերպում, մագիստրոսական կրթական ծրագրի դեկավարում, ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և դեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում, մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին։

**Դոցենտի համար՝** դասախոսությունների վարում, գործնական (սեմինար) պարապմունքների, լաբորատոր պարապմունքների անցկացում, գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների դեկավարում, մագիստրոսական կրթական ծրագրի դեկավարում, ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և դեկավարում, հետազոտական աշխատանքների իրականացում, մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին։

**Ասխատենտի համար՝** դասախոսությունների, գործնական և լաբորատոր

պարապմունքների վարում, ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում, մագիստրոսական թեզերի դեկավարում, ուսանողների ավարտական աշխատանքների և այրակտիկաների դեկավարում, մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին:

**Դասախոսի համար՝** գործնական և լաբորատոր պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում և այրակտիկաների դեկավարում:

ՀՊՏՀ-ում գործում է նաև անհրաժեշտ ուսումնաօժանդակ կազմ (ամբիոնի և լաբորատորիաների լաբորանտներ, վարչական կազմի աշխատողներ, գործավարներ, մասնագետներ և այլն): Օժանդակ կազմն ընտրվում է համաձայն դիմումի՝ հաշվի առնելով բազային կրթությունը, տվյալ մասնագիտությամբ անձի կոմպետենտությունը, կարողությունները, հմտությունները, աշխատանքային ստաժը և փորձը:

Աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու և ստացած հանձնարարությունները պատշաճ կատարելու համար աշխատողների նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները՝ շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարզևատրում, ԲՈՒՀ-ի հուշամեդալով պարզևատրում, արժեքավոր նվերով պարզևատրում, պատվոգրով պարզևատրում և կարգապահական տույժի հանում:

Համալսարանում մշակված գիտամանկավարժական և ՊԴՀ պաշտոնների տեղա-կալման և առաջքաշման չափանիշները հնարավորություն են տալիս ապահովել աշխատակազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունների արդյունավետությունը: Այդ չափանիշներն են՝ որակավորման մակարդակը, գիտական աստիճանը և գիտական կոչումը, ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպական գործունեության ձևերը և տպագրված գիտական աշխատանքները, ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը, դասալսումները:

ՀՊՏՀ ՊԴՀ-ի որակի ապահովման քաղաքականության գործիքակազմի մեջ ներառված է դասախոսների վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, որոնք իրականացվում են յուրաքանչյուր ուսումնական

տարվա ավարտին, դասախոսի մանկավարժական և գիտահետազոտական հմտություններն ու կարողությունները գնահատող հարցաքերքիկներով։ Հարցումների արդյունքները ամփոփվում և քննարկվում են համապատասխան ամբիոնի նիստերում, որտեղ վեր են հանվում ցածր գնահատականների պատճառները և նախանշում դրանց վերացման ուղիները։ Հարցումների արդյունքները պահպանվում են անձնակազմի կառավարման բաժնի տվյալների բազայում։

### **3.2.2 Գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման ընթացակարգ**

ՀՊՏՀ-ի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- ա) բափուր պաշտոնների տեղակալման,
- բ) պաշտոններում առաջքաշման,
- գ) բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման։

Թափուր պաշտոնների տեղակալման կարգով գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմի համալրումը ամբիոններում առաջանում է՝

- ա) տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի,
- բ) գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմից որոշ անձանց կենսաթոշակային (ծերության) տարիքային սահմաններին հասնելու և աշխատանքային պայմանագիրը լուծվելու,
- գ) առանձին անձանց առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման,
- դ) պայմանագրի ժամկետը լրամալուց հետո այն չվերակնքվելու դեպքերում։

Պաշտոններում առաջքաշման կարգով ՀՊՏՀ-ում գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորումն իրականացվում է գիտամանկավարժական գործունեության բնագավառում պաշտոնի հավակնորդի հաջողությունների և որակական առաջընթացի առկայության դեպքերում (գիտական աստիճանի կամ գիտական կոչման շնորհում, մասնագիտության կրթական չափորոշիչի, ուսումնական և առարկայական

ծրագրերի մշակում, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի հրատարակում, հետազոտական գործունեության ծավալում, մասնակցություն հանրապետական և միջազգային գիտամանկավարժական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքին, միջազգային ծրագրերով որակավորման բարձրացման կամ գիտական աշխատանքներ):

Բացառիկ դեպքերում գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմը կարող է ձևավորվել պաշտոններում նշանակման կարգով:

Տարբեր պատճառներով առկա պաշտոնատեղերի վերացման դեպքերում (ուսումնական բեռնվածության զգալի նվազման, ֆակուլտետի, ամբիոնի լուծարման, աշխատանքի ծավալների և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքերում, ինչպես նաև ուսումնական անհրաժեշտությամբ պայմանավորված այլ դեպքերում) գործատուն իրավունք ունի առաջարկել կնքելու փոփոխված պայմաններով աշխատանքային պայմանագիր: Փոփոխված պայմաններում աշխատանքը կատարելու՝ աշխատողի անհամաձայնության դեպքում գործատուն իրավունք ունի լուծել **ՊԴՀ-ի** պաշտոն գրադեցնող անձի աշխատանքային պայմանագիրը՝ պահպանելով աշխատանքային պայմանագիրի լուծման սահմանված կարգը:

Համալսարանում ժամավճարով դասավանդողների, ինչպես նաև 0,25 կամ 0,5 դրույքով համատեղողների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են առանց մրցույթի հայտարարման և անցկացման՝ միայն տվյալ պաշտոնին հավակնորդի համապատասխանության դեպքում: Պաշտոնի հավակնորդը պետք է բավարարի տվյալ մասնագիտության կրթական ծրագրի համապատասխան պահանջներին:

Համալսարանում սահմանվում է գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման ընտրության մրցության եղանակ:

Գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական համակազմի քափոր պաշտոնատեղի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում է տարին երկու անգամ հանրապետական մամուլում, **ՀՊՏՀ** ինտերնետային կայքում ([www.asue.am](http://www.asue.am)), ինչպես նաև **ՀՀ աշխատաշուկան ներկայացնող էլեկտրոնային կայքերում ([www.careercenter.am](http://www.careercenter.am), [www.job.am](http://www.job.am) և այլն): Դա ապահովում է **ՊԴՀ-ի** հավաքագրման և ընտրության ընթացակարգի**

թափանցիկությունը: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:

Պաշտոնատեղի հավակնորդները (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության մեջ նշված ժամկետում Համալսարանի անձնակազմի կառավարման բաժին են ներկայացնում՝

- ա) դիմում ռեկտորին,
- բ) կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
- գ) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերը և դրանց պատճենները,
- դ) հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկը,
- ե) տվյալ մասնագիտության գծով որակավորման բարձրացման կամ վերապատրաստման սերտիֆիկատները և դրանց պատճենները,
- զ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- է) համառոտ ինքնակենսագրություն:

Համալսարանի գիտամանկավարժական, **ՊԴՀ** պաշտոնների տեղակալման մեխանիզմը սահմանված է ,Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կամոնակարգումներում:

Մրցույթի արդյունքում **ՊԴՀ**-ի պաշտոններում ընտրված (հրամանագրված) անձանց աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները հետևյալն են.

- ա) պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ՝ 5 տարի ժամկետով,
- բ) դասախոս՝ 3 տարի ժամկետով:

**ՀՊՏՀ** մրցութային հանձնաժողովը ստեղծվում է գիտամանկավարժական և **ՊԴՀ** ընտրության արդյունավետության բարձրացման նպատակով:

Հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման և որակավորման պահանջներին, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների հավակնորդների թեկնածության համապատասխանելիության ստուգումը:

Սույն հանձնաժողովը կազմակերպում է դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորի և դոցենտի պաշտոնների ընտրության գործընթացը, իսկ ասխատենտի և դասախոսի պաշտոնների ընտրության գործընթացը կազմակերպում է ֆակուլտետի խորհրդին կից մրցության հանձնաժողովը: Այդ հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

Մրցության հանձնաժողովը ձևավորվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում և հաստատվում ռեկտորի հրամանով:

ՀՊՏՀ մրցության հանձնաժողովի կազմում կարող են ընտրվել են ՀՊՏՀ գիտական խորհրդի անդամներ, ստորաբաժանումների աշխատակիցներ, պրոֆեսորադասախոսական համակազմի առաջատարութարձրությունում ունեցող մասնագետներ:

Ֆակուլտետային մրցության հանձնաժողովը ձևավորվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ և հաստատվում ռեկտորի հրամանով:

Հանձնաժողովի անդամը պաշտոնի տեղակալման կամ գիտական կոչում ստանալու հավակնորդ լինելու դեպքում իր հարցի քվեարկությանը չի մասնակցում:

Մրցության հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հավակնորդի անձնական գործը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.

- ա) դիմում՝ համալսարանի ռեկտորի անունով,
- բ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- գ) ինքնակենսագրություն և սահմանված ձևաչափով ինքնավերլուծություն,
- դ) բարձրագույն կրթության դիպլոմը, նրա պատճենը և հավելվածը,
- ե) գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմները և նրանց պատճեները
- զ) ամբիոնի նիստի արձանագրության քաղվածք, որում քննարկվել է հավակնորդի քեկնածությունը,
- է) աշխատանքային հնգամյա գործունեության հայեցակարգ (ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդի դեպքում),
- ը) ամբիոնի հնգամյա գործունեության մասին հաշվետվություն (ամբիոնի վարիչի պաշտոնին կրկին հավակնելու դեպքում),
- թ) հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքների հաշվետվությունը (թափուր սկաշտոնին կրկին հավակնող անձանց համար)

Ժ) հաշվետու ժամանակաշրջանում որակավորման բարձրացումը և գիտահետազոտական ծրագրերի մասնակցությունը հաստատող փաստաթղթի պատճեն:

Համալսարանի ռեկտորը (դեկանը) իրավասու է համալսարանի գիտական խորհրդին (Փակուլտետի խորհրդին) ներկայացնել զբաղեցրած պաշտոններում պրոֆեսորադասախոսական համակազմի անդամի համապատասխանության հարցը՝ ամբիոնից ստացված համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Եթե խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ հաստատում է պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի և դասախոսի անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնում, ապա ռեկտորը՝ դեկավարվելով խորհրդի որոշմամբ, վաղաժամկետ լուծում է վերջինիս աշխատանքային պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գիտական որակավորման բարձրացման խթանման նպատակով համալսարանում սահմանվում է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերի շերտավորում՝ կախված պաշտոնից:

#### **Գ-ասախոսների ընտրությունը կատարվում է հետևյալ չափորոշիչների միավորների հանրագումարի հիման վրա:**

1. Գիտական աստիճան,
2. գիտական կոչում,
3. գիտամանկավարժական ստաժ,
4. վերջին 5 տարիներին հրապարակված գիտական հոդվածներ, այդ թվում արտասահմանյան պարբերականներում,
5. վերջին 5 տարիներին հրապարակված դասագրքեր, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ (այդ թվում՝ համահեղինակությամբ),
6. վերջին 5 տարիներին հրապարակված մենագրություններ (այդ թվում՝ համահեղինակությամբ),
7. ՀՀ-ում և այլ երկրներում որակավորման բարձրացման և գիտահետազոտական աշխատանքների հավաստագրեր,
8. մասնակցություն միջազգային գիտաժողովներին,
9. պաշտոնի հավակնորդի վերաբերյալ հարցումներ ՀՊՏՀ-ում (եթե աշխատում է ՀՊՏՀ-ում):

**ՊՊՀ-ի ընտրության չափորոշիչները և  
դրանց տրվող միավորներն ըստ պաշտոնների**

Ընտրության չափորոշիչ	Դասախոս	Ասիստենտ	Դոցենտ	Պրոֆեսոր
1	2	3	4	5
1. Գիտական աստիճան	-	0 կամ 5	0 կամ 3 կամ 5 <sup>1</sup>	0 կամ 3 կամ 5
2. Գիտական կոչում	-	0-5	0, կամ 3, կամ 5 <sup>2</sup>	0 կամ 3 կամ 5
3. Գիտամանկավարժական ստաժ	1-5	1-5	1-5	1-5
4. Վերջին 5 տարիներին հրապարակված գիտական աշխատանքներ, այդ թվում՝ արտասահմանյան պարբերականներում	1-5	1-5	1-5	1-5
5. Վերջին 5 տարիներին հրատարակված դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ	-	1-10	1-10	1-10
6. Վերջին 5 տարիներին հրատարակված մենագրություններ	-	1-5	1-5	1-5
7. ՀՀ-ում և արտերկրում որակավորման քարձրացման և գիտահետազոտական աշխատանքների հավաստագրելու	1-5	1-5	1-5	1-5
8. Այլ երկրներում միջազգային գիտաժողովներին մասնակցություն	1-5	1-5	1-5	1-5
9. Պաշտոնի հավակնորդի վերաբերյալ հարցումներ ՀՊՏՀ-ում (ՀՊՏՀ դասախոսների համար)	1-5	1-5	1-5	1-5

1 գիտական աստիճանի չափորոշիչի գնահատման ժամանակ 0 միավորը տրվում է, այդ աստիճանի բացակայության, 3 միավորը գիտությունների թեկնածուի, 5 միավորը գիտությունների դոկտորի աստիճան ունենալու դեպքում:

2 գիտական կոչման չափորոշիչի գնահատման ժամանակ 0 միավոր տրվում է, այդ կոչման բացակայության, 3 միավոր՝ դոցենտի, 5 միավոր՝ պրոֆեսորի գիտական կոչում ունենալու դեպքում:

- Գիտական աստիճանի և գիտական կոչման առկայության դեպքում թեկնածուն ստանում է առավելագույն 5 միավոր, իսկ բացակայության դեպքում՝ 0 միավոր:**
- Գիտամանկավարժական ստաժը գնահատվում է հետևյալ կերպ՝**
  - 1-5 տարի՝ 1 միավոր,
  - 6-10 տարի՝ 2 միավոր,
  - 11-20 տարի՝ 3 միավոր,
  - 21-30 տարի՝ 4 միավոր,
  - 31-40 տարի՝ 5 միավոր:
- Վերջին 5 տարում հրապարակված գիտական աշխատանքները, այդ թվում՝ արտասահմանյան պարբերականներում չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ՝**
  - մինչև 5 գիտական հոդված՝ 1 միավոր,
  - 6 - 10 գիտական հոդված՝ 2 միավոր,
  - 11-15 գիտական հոդված՝ 3 միավոր,
  - 16-20 գիտական հոդված՝ 4 միավոր,
  - 21-ից ավելի գիտական հոդված՝ 5 միավոր:
- Վերջին 5 տարում հրապարակված դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ.**
  - մեկ դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկը՝ 2 միավոր,
  - երկու դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկը՝ 4 միավոր,
  - երեք դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկը՝ 6 միավոր,
  - չորս դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկը՝ 8 միավոր,
  - հինգ և ավել դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկը՝ 10 միավոր:
- Վերջին 5 տարում հրապարակված մենագրություններ չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ.**
  - մեկ մենագրությունը՝ 1 միավոր,

- Երկու մենագրությունը՝ 2 միավոր,
  - Երեք մենագրությունը՝ 3 միավոր,
  - չորս մենագրությունը՝ 4 միավոր,
  - հինգ և ավել մենագրությունը՝ 5 միավոր:
6. ՀՀ-ում և արտերկրում որակավորման բարձրացման և գիտահետազոտական աշխատանքների հավաստագրեր չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր հավաստագրին տրվում է 1 միավոր: Առավելագույն սանդղակը 5 միավոր է:
7. Մասնակցություն այլ երկրներում միջազգային գիտաժողովների չափորոշիչը գնահատվում է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր մասնակցություն գնահատվում է մեկ միավոր, իսկ 5 և ավելի մասնակցության դեպքում գնահատվում է 5 միավոր:

Հարցումներն անցկացվում են հորիզոնական և ուղղահայաց կտրվածքով: Հորիզոնական հարցումներն անց են կացվում առնվազն իինգ դասախոսների շրջանում, տվյալ ամբիոնից և այն ամբիոններից, որոնց կրթական ծրագրերի շրջանակներում տվյալ հավակնորդը ավարտել է դասընթացը: Հորիզոնական հարցումների իրականացման համար պատասխանատու են տվյալ ամբիոնի վարիչները:

Ուղղահայաց հարցումներն անց են կացվում վերադաս պաշտոնյաների շրջանում (ամբիոնի վարիչ, ֆակուլտետի դեկան, ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր):

Հարցումներն իրականացվում են հավակնորդ դասախոսի գիտամանկավարժական հմտություններն ու կարողությունները գնահատող հարցաթերթիկներով:

Տվյալ պաշտոնին ՀՊՏՀ դասախոսի և ՀՊՏՀ-ում չաշխատող դասախոսի միաժամանակ դիմելու դեպքում հաշվարկվում է առաջին 8 գնահատման գործոնների միավորները: Հանակնորդների հավասար միավոր ստանալու դեպքում տվյալ պաշտոնի համար առավելությունը տրվում է ՀՊՏՀ աշխատող դասախոսին, որի հարցումների արդյունքերը 3,5 և ավելի միավոր է:

Տվյալ պաշտոնի հայտարարված մրցույթի հաղթող է ճանաչվում առավելագույն գնահատական ստացած թեկնածուն:

Առաջին անգամ տվյալ պաշտոնին տեղակալման դեպքում անձն անցնում է փորձաշրջան (մինչև 3 ամիս):

ՊԴՀ-ի ձևավորման, ինչպես նաև շարունակական վերապատրաստումների գործընթացի արդյունավետության գնահատման համար կարևոր նշանակություն ունի հետադարձ կապի ապահովումը: Այսինքն, ՀՊՏՀ-ն ունի ՊԴՀ-ի որակը, գիտական կոմ-պետենտությունը և շարունակական վերապատրաստումների գնահատման և մոնի-թորինգի գործիքակազմ:

### **ՊԴՀ-ի հավաքագրման և ընտրության գործընթացի արդյունավետությունը կարող են բնութագրել մերքուիշյալ չափորոշիչները՝**

- ՊԴՀ վերջին հինգ տարվա հոսունության գործակիցը,
- տվյալ տարում ՊԴՀ որակի վերաբերյալ ուսանողների շրջանում հարցումներ,
- գրախոսվող ամսագրերում ՊԴՀ-ի գիտական հոդվածների քանակը (վերջին հինգ տարվա համար),
- ՊԴՀ մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և հոդվածների հրապարակումը (վերջին հինգ տարվա համար),
- ՀՊՏՀ ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

ՊԴՀ-ի հավաքագրման և ընտրության, վերապատրաստումների գործընթացների հակադարձ կապը գնահատվում է չափորոշիչների նիշոցով.

#### **1. Դասախոսների հոսունության գործակիցը տվյալ տարում՝**

10% և ավելի՝	1 միավոր
8 - 9%՝	2 միավոր
6 - 7%՝	3 միավոր
4 - 5%՝	4 միավոր
1 - 3%՝	5 միավոր:

#### **2.Տվյալ տարում ՊԴՀ որակի վերաբերյալ ուսանողների շրջանում հարցումների արդյունքում միջինը 3 միավորից ցածր ստացած դասախոսների տեսակարար կշիռը ՊԴՀ-ում՝**

21% և ավելի՝	1 միավոր
16-20%՝	2 միավոր

11 – 15%՝	3 միավոր
6 -10%՝	4 միավոր
0 -5%՝	5 միավոր:

**3.Վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում  
ՊԴՀ հրապարակված գիտական հոդվածների քանակ՝**

մինչև 200 հատ՝	1 միավոր,
201 – 300 հատ՝	2 միավոր,
301 – 400 հատ՝	3 միավոր,
401 – 500 հատ՝	4 միավոր,
501 հատ և ավելի՝	5 միավոր:

**4.Վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային  
գիտաժողովներին մասնկացություն ունեցած և հոդվածներ տպագրած  
ՊԴՀ-ի տեսակարար կշիռ՝**

մինչև 10%-ը՝	1 միավոր,
11- 15%-ը՝	2 միավոր,
16- 20%-ը՝	3 միավոր,
21– 25%-ը՝	4 միավոր,
25% և ավելի՝	5 միավոր:

**5.ՀՊՏՀ ուսանողների մասնակցությունը հանրապետական և  
միջազգային գիտաժողովներին:**

Յուրաքանչյուր 10հանրապետական գիտաժողովին մասնակցությունը՝ 1 միավոր: 50 և ավելի հանրապետական գիտաժողովների մասնակցությունը՝ 5 միավոր: 1 միջազգային գիտաժողովին մասնկացությունը՝ 2 միավոր: 3 և ավելի միջազգային գիտաժողովներին մասնակցությունը՝ 5 միավոր:

Վերը նշված ցուցանիշները յուրաքանչյուր տարի ենթարկվում են վելուծության, որի արդյունքները ամփոփվում են ՊԴՀ-ի ձևավորման գործընթացի մոնիթորինգի հաշվետվության մեջ: Մոնիթորինգի հաշվետվությունը կարող է կազմվել ՀՊՏՀ համապատասխան ստորաբաժանման կողմից, որտեղ մանրամասն վերլուծության են ենթարկվել վերը նշված յուրաքանչյուր ցուցանիշի փոփոխության

միտումները՝ հստակ նշելով ցուցանիշի աճի կամ նվազման հիմնավոր պատճառները:

**ՊԴՀ-ի ձևավորման գործընթացների արդյունավետությունը գնահատվում է հետևյալ սանդղակի օգնությամբ՝**

## **Աղյուսակ 2**

### **ՊԴՀ-ի ձևավորման արդյունավետության գնահատման սանդղակ**

<b>Հետադարձ կապի ապահովման չափորոշիչների միավորների հանրագումարը</b>	<b>Արդյունավետության գնահատականը</b>
մինչև – 5	Անբավարար
6 - 10	Ցածր
11 - 15	Սիջին
16 - 20	Լավ
21 - 25	Բարձր

### **3.2.3 ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական զարգացման քաղաքականություն**

ՀՀ կրթական շուկայի մրցակցային պայմանները, բարձրագույն կրթության համակարգում կուտակված ու ներկայում ընդլայնվող միջազգային փորձը, գիտական, այդ թվում՝ տնտեսագիտական ուղղության տեղեկատվության ծավալների մշտական աճը, բուհում ուսուցանվող դասընթացների անվանացանկի նորացումը և ավելացումը համալսարանի առջև դրել է մի շարք կարևոր խնդիրներ: Դրանցից առավել առանցքայիններն են.

- բուհում դասավանդման որակապես նոր մակարդակի ձեռքբերումը, որն առավելագույնս կհամապատասխանի աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին, ինչպես նաև վերափոխված ու նորացված ՀՀ իրավական և ուսումնամեթոդական նորմատիվային բազային,
- կրթության հիմնարարության մեծացումը, կրթության ավանդական և ոչ ավանդական (նորամուծական) եղանակների, մեթոդների ու

- միջոցների օպտիմալ գուգակցման հաշվին կրթական գործընթացի  
ինտենսիվության աստիճանի բարձրացումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը  
ընդհանուր կրթական տեխնոլոգիաների մեջ:
  - ՀՊՏՀ-ում վերը նշված խնդիրների լուծման հիմնական ուղիներից  
է դասախոսական կազմի որակավորման բարձրացումը և  
վերապատրաստումը:

Վերապատրաստման նպատակներն են՝ դասախոսների որակավորման  
պարբերական բարձրացումը, դասախոսների նոր սերնդի ձևավորումը,  
դասախոսական կազմի մասնագիտական ներուժի այնպիսի մակարդակի  
ապահովումը, որը կհամապատասխանի տվյալ կրթական ծրագրի  
պահանջներին և կրավարարի ՀՀ, ինչպես նաև միջազգային կրթական շուկայի  
մեծացող պահանջները:

Համաձայն .Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության  
մասինե օրենքի 19-րդ հոդվածի 6.5 կետի, բուհերի դասախոսները ոչ պակաս,  
քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնում են վերապատրաստում կամ  
որակավորման բարձրացում:

#### **Դասախոսների վերապատրաստման հիմնական խնդիրները հետևյալն են.**

1. դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման  
միջազգային ու հայրենական փորձի ուսումնասիրությունը և կիրառումը  
համալսարանում,
2. դասախոսների վերապատրաստման ծրագրի մշակումն ըստ ուղղու-  
թյունների,
3. վերապատրաստման դասընթացների մշակումը,
4. դասավանդման մեթոդաբանության բարելավումը,
5. ՀՊՏՀ որակավորման բարձրացման կենտրոնի տեղեկատվական և  
մեթոդա-բանական բազայի արդիականացումը և դասախոսներին  
անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը:

#### **ՀՊՏՀ-ում վերապատրաստման տեսակներն են.**

1. Ընդհանուր վերապատրաստում, որը կարող է վերաբերել գիտական  
հետազոտության մեթոդների, այդ թվում՝ տնտեսամաքենատիկական

մեթոդների և մոդելների ուսումնասիրությանը, գիտական կոնկրետ թեմաներին, մասնագիտական օտար լեզվի բավարար մակարդակի խմացությանը, դասավանդման նոր մեթոդաբանությանը, այդ թվում՝ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների տիրապետմանը, համակարգչային տեխնիկայի կիրառման հմտությունների ձեռքբերմանը, ինտերնետային ցանցի հետ աշխատելու, դրա միջոցով համաշխարհային տնտեսագիտական գրականություն ուսումնասիրելու հմտություններին:

2. Մասնագիտական վերապատրաստում, որը կարող է վերաբերել մասնա-գիտական և մասնագիտացման դասընթացների առավել խորը և ամբողջական ուսումնասիրությանը, գիտության արդի տեսական խնդիրների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետազոտության, գործարար խաղերի և իրավիճա-կային խնդիրների մեթոդաբանության բազմակողմանի ուսումնասիրությանը: Այս տեսակ վերապատրաստումն իրականացվում է թեմատիկ և պրոբլեմային դասախոսությունների, սեմինարների ու լաբորատոր պարապմունքների կազմակերպման միջոցով:

Վերապատրաստման դասընթացներն ընդգրկում են գիտության նորագույն տեսությունները, պետք է ունենան գործնական ուղղվածություն:

## **ԳԼՈՒԽ 4. ՀՊՏՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ**

### **4.1 ՀՊՏՀ հետադարձ կապի քաղաքականություն**

#### **Ընդհանուր մոտեցումը**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը մշտապես խրախուսում և ողջունում է հետադարձ կապը իր բոլոր ներքին և արտաքին շահակիցներից՝ առաջարկությունների, գրիունակության արտահայտման, բողոքների և գանգատների տեսքով: Ե՛վ դրական, և՛ բացասական հետադարձ կապը վերլուծվում և օգտագործվում է որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և հետազա զարգացումն ապահովելու համար: Այս առումով, արդյունավետ հետադարձ կապի ապահովման համար ՀՊՏՀ-ն հետևողականորեն կիրառում է հետևյալ մոտեցումը՝

- համակարգում է բոլոր անհատական բողոքները, այդ թվում՝ բանավոր բնույթի,
- ճանաչում է շահակիցների իրավունքը ներկայացնելու բողոքներ կամ առաջարկություններ մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ,
- խրախուսում է ցանկացած տեսակի հետադարձ կապի ներկայացումը մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր ներքին և արտաքին շահակիցներից,
- ապահովում է հետադարձ կապի բոլոր դրսնորումների նախնական մշակումը և, եթե հարկավոր է, պատշաճ արձագանքումը,
- լիազորում է համապատասխան անձնակազմին կազմակերպության բոլոր մակարդակներում քննել բողոքները և դրանց լուծումներ տալ,
- բարձրագույն դեկավարության միջոցով անձնակազմի շրջանում դրական վերաբերմունք է ձևովորում բոլոր շահակիցների և նրանց կողմից ներկայացվող հնարավոր բողոքների հանդեպ,
- հարգում է շահակիցների անանունությունը և գաղտնիությունը, եթե անհրաժեշտ է:

## **Նպատակները**

ՀՊՏՀ հետադարձ կապի մեխանիզմների մշակման և իրազործման նպատակն է.

- ապահովել հետադարձ կապի տարբեր դրսնորումների ժամանակին և անաշառ կառավարումը,
- բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը,
- համակարգել հետադարձ կապի միջոցով ստացվող տվյալների հավաքագրման գործընթացը, ինչը կարող է նպաստել դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավմանը,
- ճանաչել բարձրագույն կրթության ոլորտում առկա լավագույն փորձը և փնտրել ՀՊՏՀ-ում դրա կիրառելիության ուղիները:

ՀՊՏՀ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի մշտական բարելավման համար ուսանողները խրախուսվում են ներկայացնելու իրենց կարծիքները, առաջարկությունները և բողոքները բուհի գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ապահովելով բոլորներ ներկայացնող ուսանողների անանունությունն՝ բուհը նրանց տեղյակ է պահում, որ անանուն բողոքները անձնակազմի անդամների վերաբերյալ որոշակի սահմանափակումներով են հաշվի առնվելու՝ արդարության սկզբունքը չխախտելու նպատակով:

## **Ծրջանակը**

Սույն քաղաքականությունը վերաբերում է ՀՊՏՀ ամբողջ անձնակազմին՝ առանց որևէ բացառության: Այն ուղղված է արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը ներքին և արտաքին բոլոր շահակիցներից: Դրանով պետք է առաջնորդվեն բոլոր ֆակուլտետները և ամբիոնները, իսկ հետադարձ կապը կարող է վերաբերել ՀՊՏՀ գործունեության բոլոր ուղղություններին:

## **Սկզբունքները**

ՀՊՏՀ-ում գործում են հետադարձ կապի ապահովման համապատասխան սկզբունքներ, որոնց պահպանումը պարտադիր է կառավարման բոլոր մակարդակների համար: Դրանք են՝

- **Հասանելիություն.** ապահովել հետադարձ կապի այնպիսի մեխանիզմներ, որ այդ գործընթացում կարողանան ներգրավել բոլոր շահակիցները,

- **Հաշվետվողականություն.** հետադարձ կապի ապահովման գործնքացների վերաբերյալ պետք է պարբերաբար պատշաճ հաշվետվություններ ներկայացվեն համապատասխան մակարդակի կառավարման մարմինների կողմից,
- **Տվյալների հավաքագրում.** հավաքագրել և գրանցել այն տվյալները, որոնք ստացվել են հետադարձ կապի արդյունքում, որպեսզի հնարավոր լինի դրանց հիման վրա վերլուծել մատուցվող ծառայությունների որակը,
- **Արդարացիություն.** գիտակցել, որ հետադարձ կապի ապահովման գործնքացում, հատկապես բողոքների պարագայում, պետք է պահպանել արդարացիությունը ներգրավված կողմերից բոլորի նկատմամբ,
- **Ուսուրսների բաշխում.** ապահովել անհրաժեշտ ռեսուրսների բաշխումը պատվիրակված լիազորությունների բավարար մակարդակով, որպեսզի հետադարձ կապի ապահովման գործնքացը իրագործվի պատշաճ կերպով,
- **Արագ արձագանքում.** հետադարձ կապը ստանալուն պես վերլուծել և օգտագործել այն՝ առանց անհարկի հետաձգման,
- **Վերանայում.** պարբերաբար վերանայել հետադարձ կապի ապահովման մեխանիզմները և ընթացակարգերը,
- **Հրապարակայնություն.** ապահովել **ՀՊԾՀ** հետադարձ կապի քաղաքականության և ընթացակարգերի հրապարակայնությունը բոլոր ներքին և արտաքին շահակիցների համար:

## 4.2 Հետադարձ կապի մեխանիզմներ

**ՀՊԾՀ** հետադարձ կապի մեխանիզմները հիմնված են այն սկզբունքային մոտեցման վրա, որ անկախ այն հանգամանքից, թե որքան է այս կամ այն մեքողի արդյունավետությունը, դրանք պետք է լինեն **բազմատեսակացված**, որպեսզի հնարավոր լինի ապահովել բոլոր շահակիցների ակտիվ մասնակցությունը: Հետադարձ կապի մեկ կամ երկու ուղղվ անխուսափելիորեն հնարավոր չի լինի ընդգրկել շահակիցների բոլոր խմբերին, քանի որ նրանք հաճախ պահանջում են անհատական և յուրահատուկ մոտեցում:

Ուսանողների բավարարվածությունը գնահատվում է.

- Կրթական ծրագրի մեկնարկին՝ նոր ընդունված ուսանողների հետ «առաջին տպավորության հարցում» անցկացնելով,
- յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում՝ «բավարարվածության հարցում» անցկացնելով,
- կրթական ծրագրի ավարտին՝ շրջանավարտների հետ «ավարտական հարցում» անցկացնելով:

Ուսանողների բավարարվածության վերաբերյալ լրացուցիչ հարցման տվյալներ և համապատասխան տեղեկատվություն ստանալու համար կարող են օգտագործվել արտաքին ուղիներ՝ այնպիսիք, ինչպիսիք են Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի կամ Որակի ապահովման ազգային կենտրոնի անցկացրած հարցումները և նրանց կողմից տրամադրված տվյալները:

Ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներից յուրաքանչյուր կիսամյակ կազմվում են հաշվետվություններ և տրամադրվում են կուրսանեկներին ու ՀՊՏՀ որակի ապահովման բաժնին, որպեսզի վերջինս դրանց հիման վրա.

- կազմի կիսամյակային և տարեկան միտումների վերաբերյալ հաշվետվություններ, որոնք արդեն ներկայացվելու են արտաքին շահակիցներին,
- իրականացնի բենշմարքին,
- մատնանշի բարելավման հիմնական ոլորտները:

Հետադարձ կապի մեխանիզմների մասին տեղեկատվություն է տրամադրվում շահակիցներին հետևյալ ուղիներով.

- ՀՊՏՀ պաշտոնական համացանցային կայքի միջոցով ([www.asue.am](http://www.asue.am)),
- գանգվածային լրատվության միջոցներով,
- հրապարակումների ձևով,
- լսարանային հանդիպումների միջոցով,
- սեմինար-քննարկումների, ժողովների ընթացքում և այլն:

Հետադարձ կապի ապահովման արդյունավետ մեխանիզմ են **հանրային գնահատումները և գրանցման քարտերը**: Մասնավորապես, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ կազմակերպել «բաց հաշվետվողականության

ֆորումներ», որտեղ բոլոր հնարավոր շահակիցներից, այդ թվում՝ քաղաքացիներից, հնարավոր է ստանալ իրենց կարծիքները, բողոքները, վերլուծությունները ՀՊՏՀ գործունեության վերաբերյալ: Գրանցման քարտերը ևս գործուն մերոդ է՝ ապահովելու համար ստացված կարծիքների քանակական պատկերը: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ քանակական և որակական տվյալները միմյանց փոխլրացնեն: Պետք է բացառել «թվեր առանց շարադրանքի և շարադրանք առանց թվերի» բացասական երևույթը: Հատկապես, եթե հետադարձ կապը պետք է օգտագործվի կառավարչական որոշումների ընդունման համար, ապա վերոնշյալ սկզբունքի պահպանումն առաջնային է: Հանրային գնահատումների և գրանցման քարտերի մերոդները թույլ կտան նաև հետագայում արդյունքների վերլուծությունից հետո ընդգրկել համապատասխան շահակիցներին և հետադարձ կապի ապահովման գործընթացը վերածել համալսարանի մասնակցային կառավարման համակարգի:

Համալսարանի համար հետադարձ կապի գործուն մեխանիզմ կարող է լինել ինստիտուցիոնալ կարողությունների **ինքնապերլուծության** արդյունքների հրապարակայնության ապահովումը բոլոր շահակիցների համար: Այս տեսակի աշխատանքի արդյունքները հարկավոր է ներկայացնել ոչ միայն պետական կառավարման լիազոր մարմնին՝ հավատարմագրման համար, այլ նաև սեղմ բրոշյուրավորված տարբերակով մատուցել կրթական գործընթացում ներգրավված կողմերին: Սա հնարավորություն է տալիս ինչպես ապահովելու համալսարանի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, այնպես էլ հետագայում ստանալու շահակիցների առավել հիմնավորված կարծիքները համալսարանի գործունեության ձեռքբերումների և բացքողումների վերաբերյալ:

Զափազանց կարևոր հանգամանք է ստացված հետադարձ կապին մշտապես **արձագանքելը**, քանի որ եթե շահակիցները նկատում են, որ նրանց կողմից եկող հետադարձ կապը, այդ թվում նաև բողոքները, անտեսվում են կամ չեն հանգեցնում որոշակի փոփոխությունների, նրանք կորցնում են վստահությունն այդ մեխանիզմի նկատմամբ և դադարում են այն օգտագործել: Այսպիսով, արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար ՀՊՏՀ-ն պետք է համակարգված գործընթացների միջոցով ուսումնասիրի, վերլուծի և պատասխանի ստացված հետադարձ կապին և բողոքներին:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արդյունավետ հետադարձ կապի ապահովումը, ինչպես ցանկացած այլ գործընթաց, պահանջում է որոշակի ներդրումներ: Խոսքը վերաբերում է, ինչպես ֆինանսական միջոցներին, այնպես էլ ժամանակային ծախսումներին և մարդկանց ներգրավվածությանը: Մասնավորապես, արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմ ունենալու և գործարկելու համար նախևառաջ պետք է ապահովել հետևյալը.

- ապահովել ***բարձրագույն ղեկավարության ներգրավվածությունը*** հետադարձ կապի գործընթացին: Կառավարիչների և առաջնորդների աջակցությունը առաջնային է համասլատափան ֆինանսական ռեսուրսների ապահովման տեսանկյունից և հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետ օգտագործման համար: Նրանք են որոշում համապատասխան մոտիվացիոն եղանակները և թե ինչպես պետք է գործունեությունը գնահատվի: Բացի այդ, հարկավոր է համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում ունենալ հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ կիրառող կառավարիչներ, ովքեր իրենց փորձը կարող են տարածել համալսարանով մեկ: Կարևոր է նաև ապահովելքոլոր ֆակուլտետների համատարած մասնակցությունը հետադարձ կապի գործընթացներին, այլապես ստացված տեղեկատվությունը կարող է մեկուսանալ և կոնսերվացվել կոնկրետ խճի շրջանակներում:
- Հետադարձ կապի համակարգը և ընթացակարգերը հաստատելիս ***ուշադրություն դարձնել մանրություններին:*** Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմները պահանջում են կարողությունների հստակ շրջանակ, ինչպիսիք են հարցումների անցկացումը, վերլուծական և հաղորդակցական ունակությունները: Այս առումով, հարկ է ամեն կերպ ամրապնդել և ուժեղացնել անձնակազմի համապատասխան կարողությունները վերապատրաստումների միջոցով: Շահակիցները, ովքեր պետք է հետադարձ կապ ապահովեն, հաճախ ցանկանում են իմանալ, թե ինչպես է համապատասխան տեղեկատվությունը օգտագործվելու և թե ումից են ստանալու դրա արձագանքը: Այս առումով համալսարանը տարբեր օղակներում պետք է հստակեցնի, թե ովքեր են այն պատասխանատունները,

որ ժամանակին արձագանքելու են շահակիցներին, որպեսզի **հետադարձ կապի շղթան** «փակվի»: Շատ խնդիրներ կան, որոնց վերաբերյալ կարող է հետադարձ կապ ստացվել, բայց դրանք համալսարանի վերահսկողության ոլորտից դուրս են: Այս առումով ևս անհրաժեշտ է շահակիցների հետ արձագանքման համակարգի կիրառումը և նմանատիպ խնդիրների վերաբերյալ վերջիններիս տեղեկացումը:

### **4.3 Հետադարձ կապի ստացումը և օգտագործումը**

Ուսանողներից կամ այլ շահակիցներից հետադարձ կապ ստանալիս և դրա հետ կապված գործողություններ կատարելիս ՀՊՏՀ-ն պետք է ապահովի հետևյալ սկզբոնների կիրառումը.

- կիրառվող ընթացակարգերն արդար են, էթիկայի նորմերին համապատասխան, բափանցիկ, պատեհաժամ և հանգեցնում են պատշաճ գործողությունների,
- հետադարձ կապի ապահովման ընթացքում մարդկանց նկատմամբ վերաբերմունքը հիմնված է հարգանքի, հավասար հնարավորությունների, իսկ անհրաժեշտության պարագայում՝ գաղտնիության վրա,
- հավաքվող, վերլուծվող և օգտագործվող տեղեկատվությունը ճշգրիտ է, չեզոք և անմիջապես բխում է հետադարձ կապի ապահովման նպատակներից,
- ստացված տեղեկատվությունը անհրաժեշտաբար օգտագործվում է շարունակական բարելավման համար,
- հետադարձ կապի արդյունքում իրականացվող գործողություններն իրենց հերթին արձագանքման մեխանիզմի միջոցով հաղորդվում են շահակիցներին:

#### **4.4 Հասարակական պատասխանատվություն.**

##### **հրապարակայնություն և հաշվետվողականություն. որակի ապահովման համակարգի հետ հետադարձ կապը**

Համալսարանների հրապարակային և հաշվետու գործունեության հենքը ձևավորվել է անտիկ աշխարհի և հետագայում Եվրոպական համալսարանների գործունեության հիմնարար սկզբունքներում՝ օժտելով համալսարանները ակադեմիական ազատություններով և ինքնավարությամբ:

Համալսարանների հրապարակային գործունեություն ուղղորդվում է երկու հիմնարար գաղափարով.

- Ազատությունները ձևավորում են պարտավորություններ և
- ինքնավարությունը՝ հաշվետվողականություն:

Հիմնարար նշանակություն ունի համալսարանների հասարակական պատասխանատվությունը: «Համալսարանների ազատությունների Խարտիան» ձևակերպում է նշված հիմնարար սկզբունքը:

Մենք ավելի քան երրու պետք է գիտակցենք համալսարանների ստանձնելիք դերը անընդհատ փոփոխվող հասարակությունում և որ. Կրտսեր սերնդին գիտելիքի փոխանցման համալսարանների առաքելությունը ժամանակակից աշխարհում ենթադրում է նաև հասարակական պատասխանատվություն, ինչպես նաև հասարակության մշակութային, հասարակական և տնտեսական զարգացումը մասնավորապես, պահանջում է նշանակալից ներդրում կրության շարունակականության գործում:

Համալսարանը հասարակության սրտում աշխարհագրորեն և պատմական տարբեր ժառանգությամբ ձևավորված ինքնավար հաստատություն է, որը ստեղծում, ուսումնասիրում, գնահատում և մշակույթ է փոխանցում գիտահետազոտական աշխատանքների և ուսուցման միջոցով:

Համալսարանների հասարակական պատասխանատվությունը իրացվում է հրապարակայնության և հաշվետվողականության ձևով:

Հրապարակայնության և հաշվետվողականության տնտեսագիտական հիմքը կրթության բնութագրումն է իբրև հանրային բարիք, այլ ոչ ապրանք, ընդամին հանրային բարիքի սպառողական արժեքը գնահատում է հանրությունը՝ ազդելով այդ արժեքի ստեղծման գործընթացի վրա: Կարելի է հետևություն անել, որ նշվածով է պայմանավորված կրթության

անքակտելի կապը շահառուների, իրականում՝ ամբողջ հասարակության հետ, և որ հասարակության կողմից տրվող գնահատականը հակադարձ կապի ապահովման համակարգ է ձևավորում:

Ընդունին, հաշվետվողականության կրթական քաղաքականությունը սահմանվում է որպես.

Բուիի ինքնավար գործունեության բոլոր ոլորտների մասին բաց, հասարակական տեղեկատվության տրամադրում ազգային և միջազգային շահակիցներին:

Հրապարակայնությունը և հաշվետվողականությունը նպաստում է.

- կրթության որակի բարձրացմանը,
- որակավորումների ճանաչմանը,
- ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը,
- ՀՊՏՀ գործունեության նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- ներքուհական համերաշխության և վստահության ամրապնդմանը,
- ուսանողների ներգրավվածության բարձրացմանը,
- օտարերկրյա ուսանողների, դասախոսների և հետազոտողների ներգրավմանը ՀՊՏՀ-ում,
- գիտելիքահեն և հետազոտական ուղղվածությամբ կրթության զարգացմանը,
- վիճակագրական տվյալների վերլուծության բարելավմանը,
- արտաքին շահեկիցների ներգրավման ավելացմանը,
- հնարավոր ներդրողների վստահության բարձրացմանը,
- բենշմարքինգի իրականացմանը
- բուհական հաստատությունների վարկանիշավորմանը,
- կոռուպցիոն ռիսկերի նվազմանը:

Համալսարանների հասարակական պատասխանատվության հիմնարար սկզբունքը իրացվում է արտաքին և ներքին մակարդակներով.

## I. Արտաքին՝ ազգային և միջազգային.

1. Ազգային օրենսդրություն, իրավական ակտեր,
2. Ազգային կրթական ռազմավարություններ և զարգացման գերակա ուղղություններ,

3. Սիցազգային կրթական իրավական ակտեր և զարգացման միտումներ,
4. Սիցազգային սոցիալտնտեսական միջավայրի ազդեցություն:

## **II. Ներքին՝ բուհական**

1. Ուսումնական գործընթաց
  2. Գիտահետազոտական աշխատանքների
  3. Ֆինանսատնտեսական ոլորտ
  4. Կառավարման համակարգ
  5. Սիցազգային կապեր
  6. Համալսարանի ընդհանուր գործունեություն:
1. Արտաքին մակարդակի՝ օրենսդրության ոլորտում հրապարակայնությունը, բափանցիկությունը և հաշվետվողականությունը ամրագրված է հիմնականում.
    - Սիցազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես ԵՄ 2020 ռազմավարությունում,
    - ԵՄ ԲԿ արդիականացման օրակարգի ԵՄ հայտարարագիր,
    - Եվրախորհրդի բարձրագույն կրթության ասպարեզի առաջարկություններում ու բանաձևներում, մասնավորապես՝ բուհերի հանրային պատասխանատվության սկզբունքներում,
    - Բոլոնիայի գործընթացի սկզբունքներում և առնչվող փաստաթղթերում/ԵԿՓՀ ուղեցույցում և այլն:
    - ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերում, մասնավորապես կրթական ոլորտների դասակարգչում:
    - Սոցիալ-տնտեսական միջավայրի ազդեցությունը կրթության ոլորտում հիմնականում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն փաստաթղթերում,
    - ՀՀ Սահմանադրությունում,
    - բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքում,
    - ՀՀ ԿԳՆ բարձրագույն կրթության գերակա ուղղություններում,
    - ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պահանջներով:

Մասնավորապես, «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում նշված է.

**Հոդված 4.** Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝...

4) մրցութայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը.

5) եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետքուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների ճանաչելիությունն ապահովելը.

6) ուսանողների միջազգային շարժունակությանը նպաստելը.

**Հոդված 22.** Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության որակի ապահովումը և դրա նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն ուղղված է բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:

3. Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով բարձրագույն ուսումնական հաստատությունը և հետքուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր են հրապարակել որակի գնահատման և (կամ) հավատարմագրման շափանիշները, որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները, ինչպես նաև որակի գնահատման ընթացիկ արդյունաբերը:

5. Բարձրագույն և հետքուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝ գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Կարևորագույն ուղղություն է բուհերի վարկանիշավորումը, որը համարվում

Է Բոլոնիայի գործընթացի սոցիալական հարթության կարևոր դրսևորումներից մեկը՝ քափանցիկության և հասարակության առջև հաշվետվողականության ապահովման տեսակետից:

Որպես ՀՀ բուհերի վարկանիշավորման հրապարակայնացման ուղղություններ՝ բուհերը պետք է հրապարակային տեղեկատվություն տրամադրեն հետևյալ ցուցանիշներով.

- ուսանողներ,
- ուսումնառության արդյունքներ,
- միջազգային ուղղվածություն,
- գիտահետազոտական աշխատանքներ,
- դասավանդման/ուսումնառության գործընթաց,
- հաստատության կարողություններ,
- աշխատանքային շուկա/զբաղվածունակություն,
- ընդհանուր գնահատումներ (ուսանողներ, դասախոսներ),
- համալսարանական շինություններ,
- հանրային ծառայություններ և կապեր:

## II. Ներքին՝ բուհական

1. Ուսումնական գործընթաց
2. Գիտահետազոտական աշխատանքներ
3. Ֆինանսատնտեսական ոլորտ
4. Կառավարման համակարգ
5. Միջազգային կապեր
6. Համալսարանի ընդհանուր գործունեություն:
  1. Ուսումնական գործընթացի հրապարակայնությունը ներառում է տեղեկատվություն հետևյալի մասին.
    - Ուսումնական ծրագրեր,
    - Դասավանդում,
    - Գնահատում,
    - Ուսումնական գործունեության կազմակերպում,
    - Դասախոսական կազմ,
    - Ուսումնառության պայմաններ
  2. Գիտահետազոտական աշխատանքների՝
    - Իրականացվող ուղղություններ

- Դրամաշնորհների մասին
- Հետազոտողների տվյալները և այլն

### **3. Ֆինանսատնտեսական ոլորտ**

Ըստ ՊՈԱԿ-ի հաշվետվողականության կարգի՝ Հավելյալ տեղեկատվությունը տրամադրվում է լայն հասարակայնությանը:

### **4. Կառավարման համակարգ**

Կառավարման համակարգին առնչվող բոլոր որոշումների, կազմակերպական կառուցվածքի փոփոխությունների և ռազմավարական կառավարմանն առնչվող բոլոր հարցերի մասին բաց տեղեկատվության հրապարակում:

### **5.Միջազգային կապեր**

Ներառում է տեղեկատվություն միջազգային կապերի, օտարերկրյա ուսանողների, օտար լեզվով ՀՊՏՀ գործունեության բոլոր ոլորտների մասին. բաց, մատչելի և ամբողջական տեղեկատվության տրամադրում ազգային և միջազգային բոլոր շահեկիցներին: Տեղեկատվություն պայմանագրերի, բանակցությունների, նախատեսվող, մշակվող և ընթացիկ ծրագրերի մասին: Վիճակագրական տվյալների տրամադրում օտարերկրյա ուսանողների, դասախոսների և հետազոտողների մասին:

### **6.Համալսարանի ընդհանուր գործունեություն**

Բուհական, ուսանողական հավելյալ ծառայությունների, ՀՊՏՀ գործունեությանն առնչվող տեղեկատվական, վիճակագրական տվյալների, վերլուծությունների, հաշվետվությունների հրապարակում:

ՀՊՏՀ գործունեության հրապարակայնության և հաշվետվողականությունը պետք է ապահովվի հետևյալ սկզբունքներով.

- անաշառության
- հավաստիության
- ամբողջականություն
- բափանցիկություն
- հասանելիություն

ՀՊՏՀ-ն կապահովի շահառուներին տրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: ՀՊՏՀ-ն պետք է կանոնակարգի

նաև տեղեկատվության մշակման, փոխանցման, հաստատման և կիրառման գործընթացը:

### Աղյուսակ 3.

#### Հետադարձ կապի մեխանիզմների աղյուսակ

Մակարդակներ	Վերլու- ծության ձևը	Կատարված գործողությունը	Հետադարձ կապի գործիքակազմը
I. Արտաքին ազգային և միջազգային.			
Ազգային օրենսդրություն, իրավական ակտեր	օրենսդրու- թյան Պահանջների ուսումնա- սիրում	Պահանջներից բխող գործողությունների իրականացում	Կատարողի հաշվետվության իրապարակում Հաշվետվության քննարկում Հարցում, դիտարկում
Ազգային կրթական ռազմավարու- թյուններ և զարգաց- ման գերակա ռողություններ	Ուսումնա- սիրում Վերլու- ծություն Քննար- կումներ	Կառավարման խորհրդի քննարկում և որոշում Ուկտորի հրաման, Գիտխորհրդի որոշում և դրանց վերաբերյալ տեղեկացում շահակիցներին, համապատասխան ուղեցույցների, մեթոդական նյութերի մշակում, կառավարչական, ֆինանսական փոփոխությունների վերլուծում, մատրիցային եղանակով PEST. PESTEL և այլն	Իրականացման դիտարկում, հաճախանապարանական քննարկումների արդյունքների լուսաբանում, հարցում, որոշումների լուսաբանման կարծիքների վերլուծություն հասանելիության և տեղեկացվածության վերլու- ծություն
Միջազգային կրթական իրավական ակտեր և զարգացման միունիւներ,	Ուսումնա- սիրում Վերլուծու- թյուն Քննարկում- ներ	գարգացումներից բխող արտաքին միջազգային վերլուծություն	Վերլուծությունների քննարկում և իրապարակում Միջազգային կրթական ակտերի քարզմանում և իրապարակայնացում
Միջազգային սոցիալ- տնտեսական միջավայրի ազդեցություն:	Տեղեկա- տվության հավաքում, մասնա- գիտական քննարկում- ներ	Վերլուծություն՝ ճյուղի մրցունակության վերլուծական գործիքների օգտագործմանը, կենսապարբերաշրջանի և այլ մատրիցային մոդելներով	Շահակիցներին տրամադրել վերլուծությունների արդյունքները: Իրականացնել քննարկումներ
II. Ներքին՝ բուհական			

Ուսումնական գործընթաց		Ուսումնառության պայմանների, դասավանդման մերողների և գնահատման արդյունքների հրապարակում, պարզաբանում՝ տեղադրելով ՀՊՏՀ ներքին ցանցում և այլ որոշակի վայրերում, կայքէջում տպագրված՝ տեղեկատվությունը՝ ուսումնական կատալոգ և այլն տրամադրվում է սովորողներին, դիմորդներին, այլ շահակիցներին և ՀՊՏՀ աշխատակիցներին	Տեղեկացվածության մշտադիտարկում կարծիքների և առաջարկում բաց քննարկում
Գիտահետազոտական աշխատանքների	Գերակա ուղղությունների և ֆինանսավորման աղյուսների վերլուծություն	Գիտահետազոտական աշխատանքներ, թեմաների հրապարակում և իրականացնելուների տվյալների ներկայացում	Հաշվետվություններ գիտահետազոտական աշխատանքների կիրառման հավաստագրեր, աշխատաշուկայի և այլ շահակիցների բավարարվածության հարցումներ աշխատանքների թեմաների և դրամաշնորհների տրամադրման պայմանների մասին տեղեկացվածության հարցումներ
Ֆինանսատնտեսական ոլորտ	Ըստ հաշվետվողականության կարգի	Ֆինանսական արդյունավետության վերլուծություն	Ֆինանսական վերլուծության արդյունքների հրապարակում, ամբողջական տեղեկատվության տրամադրում, քննարկում
Կառավարման համակարգ	Կառավարման խորհուրդներում և հետազոտական աշխատանքներում կատարված օւժինալացման և արդյունավետության վերլուծություններ, որոշումներ	Կառավարման համակարգին առնչվող բոլոր որոշումների, կազմակերպական կառուցվածքի փոփոխությունների և ռազմավարական կառավարմանը առնչվող բոլոր հարցերի մասին բաց տեղեկատվության հրապարակում:	Տեղեկացվածության, հասանելիության հարցում Իրականացման առնչակցության և դրամաշնորհաների վերլուծություն

Սիցազգային կապեր		Տեղեկատվության օտար լեզուներով տեղեկատվության մշակում և տարածում Օտարերկրյա ուսանողներին և դասախոսներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում	Հասանելիության, ամբողջականության և բավարարվածության հետազոտում էլեկտրոնիկ հարցումների, ֆոկուս խճերի և այլն միջոցով Օտարերկրյա գործընկերներ համալսարանների, կազմակերպությունների կարծիքների հարցում տեղեկատվության հասանելիության, ամբողջականության, համընթեռնելիության համար
Համապատասխանի ընդհանուր գործունեություն		Տեղեկատվության տեղադրում զանգվածային լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում լրսարանում, հավաքների անցկացում	Ապառողների կարծիքների հետազոտություն առաջարկների մշակում կրության շահակիցների բավարարվածության հարցում

## **ԶԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Որակ** – բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է իմաստիուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում։ Կախված օգտագործման նպատակից՝ տարրերում են որակի տարրեր սահմանումներ՝ որակը որպես գերազանցություն, որակը որպես համապատասխանություն նպատակին, որակը որպես բարելավում և այլն։

**Որակի ապահովում** - բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց։

**Որակի կառավարում** - որակի բարելավման նպատակով բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող միջոցառումների համակցություն։

**Որակի վերահսկում** – բուհի կամ կրթական ծրագրի որակի ստուգման ներքին կամ արտաքին գործընթաց։

**Որակի բարելավում** – որակի կառավարման միջոցով որակի շարունակական բարձրացման գործընթաց։

**Որակի մշակույթ** - որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին։

**Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչների և ուղենիշներ**– Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված համաեվրոպական պաշտոնական փաստաթուղթ, որը ներառում է համապատասխան չափորոշիչներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ու արտաքին ապահովման, ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների համար։

**Որակի ներքին ապահովման համակարգ** – կառավարման համակարգ, որը սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների օգնությամբ իրագործում է բուհի որակի ապահովման քաղաքականությունն ու խնդիրները։

**Որակի փորձաքննություն** – բուհի կամ կրթական ծրագրի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման) փաստական գործընթաց։

**Գնահատում** - բուհի կամ ծրագրի որակի համակարգված և քննախույզ վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և/կամ երաշխավորությունների։

**Ինքնավերլուծություն/ինքնազնահատում** – բուիի ինստիտուցիոնալ և ծրագրային կարողությունների զնահատման վերլուծական գործընթաց, որի արդյունքներն ամփոփվում են ինքնավերլուծության/ինքնազնահատման գեկույցում:

**Արտաքին գնահատում** - գործընթաց, որով հավատարմագրող կազմակերպությունը հավաքում է տվյալներ, տեղեկատվություն և վկայություններ բուիի, նրա առանձին միավորի կամ կրթական ծրագրի մասին՝ նրա որակի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար: Այն բաղկացած է երեք իրարահաջորդող փուլերից՝ ինքնազնահատում և համապատասխան գեկույցի կազմում, փորձագետների ստուգայց և գնահատում, զնահատման գեկույցի կազմում:

**Փորձագիտական գնահատում** – բուիի կամ կրթական ծրագրի որակի և արդյունավետության, կաղըային, ռեսուրսային ապահովածության վերաբերյալ արտաքին փորձագետների կողմից իրականացվող գնահատման գործընթաց:

**Հավատարմագրում** - գործընթաց, որով պետական (կամ հասարակական) հավատարմագրող կառույցը գնահատում է բուիի կամ կրթական ծրագրի որակը՝ նախանշված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրանց համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար:

**Չափանիշներ** – մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և/կամ չափորոշիչ իրագործման աստիճանը:

**Չափորոշիչներ** – պահանջների և պայմանների ակնկալվող մակարդակների վերաբերյալ ձևակերպումներ, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի բուիի կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ լիցենզավորվելու համար:

**Ուսումնառության արդյունք** – ուսումնառության արդյունքն այն գիտելիքը, հմտություններն ու կարողություններն են, որոնք ուսանողը պետք է իմանա և կարողանա դրսնորել դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին:

**Ուսումնառության ակնկալվող արդյունքը** սահմանում է, թե կրթական գործընթացի ավարտին ուսանողն ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա ցուցաբեկ:

**Զեռքբերված ուսումնառության արդյունքները** ցույց են տալիս, թե ուսումնառության ակնկալվող արդյունքի համեմատ, ինչ են ձեռք բերել ուսանողները դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին:

**Որակավորման նկարագրիչներ** – ձևակերպումներ, որոնք սահմանում են որակավորումների վերջնարդյունքները բարձրագույն կրթության

համապատասխան մակարդակներում և բնութագրում են դրանց միջև հիմնական տարրերությունները:

**Ծրագրի մշակման արտոնում** - գործընթաց, որի արդյունքում ուսումնական ստորաբաժանումը ստանում է բուհի պաշտոնական համաձայնությունը՝ ըստ ներկայացրած հայտի նոր կրթական ծրագրի մշակման համար:

**Ծրագրի հաստատում** - գործընթաց, որով բուհը գնահատում է նոր կրթական ծրագրի մշակման որակը և ծրագրային թիմի կարողությունը՝ իրականացնելու այն սահմանված ստանդարտներին համապատասխան:

**Ծրագրի պարբերական վերանայում** - գործընթաց, որով բուհը գնահատում է ծրագրի չափորոշիչների ու նպատակների ձեռքբերումը և փաստական մատուցման որակը՝ նրա իրականացման լրիվ ցիկլի արդյունքներով, և որոշում ընդունում ծրագրի շարունակման նպատակահարմարության կամ ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**Ծրագրի մոնիթորինգ** – գործընթաց, որը դիտարկում է ծրագրի արդյունավետությունը՝ սահմանված նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու տեսանկյունից և բացահայտում է ուսման որակի հետ կապված խնդիրները՝ բարելավող անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը և լավագույն փորձի տարածումն ապահովելու համար:

**Կրթական ծրագրի պրոֆիլ** – ծրագրի իրականացման արդյունքում շնորհվող որակավորման տարբերիչ հայտանիշների նկարագրություն՝ հիմնված նրա առանձնահատուկ նպատակների վրա, որը ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ որակավորումը հարաբերվում որակավորումների ընդունված շրջանակին և աշխատանքային միջավայրին:

**Որակավորումների ազգային շրջանակ** – որակավորումների համապարփակ հեմք, որը սահմանում է երկրում ճանաչված բարձրագույն կրթության բոլոր որակավորումները՝ աշխատածավալի, մակարդակի, կրթական վերջնարդյունքների և այլ բնութագրերի միջոցով:

**Որակավորումների եվրոպական շրջանակ**-որակավորումների համապատակավակցող հեմք, որը բափանցիկ է դարձնում հարաբերակցությունը Եվրոպական երկրների որակավորումների միջև և ծառայում է որպես որակավորումների տարբեր ազգային շրջանակների փոխկապակցման մեխանիզմ:

## **ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ**

### **Օրենքներ**

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Կրթության մասին» /ընդունվել է 14.04.1999/
2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Քարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» /Ընդունվել է 14.12.2004/
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» /ընդունվել է 08.07.2005/

### **Որոշումներ**

1. «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում /30 հունիսի 2011 թվականի N 978-ն/
2. «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում /30 հունիսի 2011 թվականի N 959-ն/
3. «Քարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդիհանուր չափորոշիչները հաստատելու մասին» հայաստանի հանրապետության կառավարության որոշում /16 հունվարի 2001 թվականի N 24/
4. «Քարձրագույն մասնագիտական և հետքուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւաբորման և հաստատման կարգը հաստատելու մասին» հայաստանի հանրապետության կառավարության որոշում /14 ապրիլի 2005 թվականի N 449-ն/
5. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձեւաբորման կարգը հաստատելու մասին» հայաստանի հանրապետության կառավարության որոշում /23 հունիսի 2005 թվականի N 975-ն/

6. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեղիտային համակարգի ներդրման մասին» հայաստանի հանրապետության կառավարության որոշում /22 դեկտեմբերի 2005 թվականի N 2307-ն/
7. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /12 հունվարի 2006 թվականի N 73-ն/
8. «Առնվազն իիմնական ընդհանուր կրթության հիմք շպահանջող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /3 օգոստոսի 2006 թվականի N 1151-ն/
9. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հայաստանի հանրապետության կառավարության որոշում /30 օգոստոսի 2007 թվականի N 1038-ն/
10. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում /23 նոյեմբերի 2007 թվականի N 1412-ն/
11. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ ստեղծելու, «մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու, նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով հավատարմագրման փորձաքննություն իրականացնելու լիազորություն տալու և Հայաստանի Հանրապետության

2008 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1540-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին (27 նոյեմբերի 2008, 1486 – ն)

12. «Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշում/ 9 հուլիսի 2009 թվականի N 808-ն/:

## **Էլեկտրոնային կայքեր**

- ՀՀ Կառավարություն <http://www.gov.am/en/>
- ՀՀ Կրթության և գիտության նախարարություն <http://edu.am/>
- «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ <http://www.cfep.am/>
- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ <http://www.anqa.am/am/%D5%88%D4%B1%D4%B1%D4%BF.aspx>
- Որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց (INQAAHE) <http://www.inqaahe.org/>
- Մասնագիտական կրթության որակի ապահովման Եվրոպական ասցիացիա (ENQA) <http://enqa.eu/>
- ԵՄ կրթության, տեսաձայնային և մշակութային գործակալություն [http://eacea.ec.europa.eu/index\\_en.php](http://eacea.ec.europa.eu/index_en.php)
- Եվրախորհուրդ <http://hub.coe.int/web/coe-portal>
- Բոլոնիայի գործընթացի քարտուղարություն <http://www.chea.info/>
- Եվրոպական համալսարանների ասցիացիա (EUA) <http://www.eua.be/Home.aspx>
- Եվրոպայի ուսանողական միություն(ESU) <http://www.esu-online.org/>
- ՅՈՒՆԵՍԿՕ <http://en.unesco.org/>

- Համաշխարհային Բանկ <http://www.worldbank.org/>
- Ծարունակական կրթության դիտակետ  
<http://www.lifelonglearning-observatory.eu/>
- Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն <http://www.oecd.org/index.htm>
- Եվրոպայի կրթական համակարգերի կառուցվածքների և քաղաքականությունների ցանց  
[http://eacea.ec.europa.eu/education/eurydice/index\\_en.php](http://eacea.ec.europa.eu/education/eurydice/index_en.php)
- ENIC-NARIC <http://www.enic-naric.net/>
- Ակադեմիական փոխանակաշման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն <http://www.armenic.am/>
- Tuning <http://www.unideusto.org/tuning/>
- Համալսարանների միջազգային ասոցիացիա  
<http://www.iau-aiu.net/>
- Բարձրագույն կրթության քաղաքականության հետազոտությունների կենտրոն (CHEPS)  
<http://www.utwente.nl/mb/cheps/>

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՏՀ

# որակի ապահովման ձեռնարկ

(ուսումնամեթոդական ուղեցույց)

Չափսը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 6,5 տպ. մամուլ:  
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

---

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում:  
Դաստիարակության 24/11, հեռ. 28 54 28  
E-mail: [vmv\\_print@yahoo.com](mailto:vmv_print@yahoo.com)  
[www.vmv-print.am](http://www.vmv-print.am)